

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	3
<b>ԳԼՈՒԽ 1. ՀՀ ԿԱՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՁԱՐԳԱՅՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ</b>	
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ	6
<b>ԳԼՈՒԽ 2. ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ</b>	8
<b>ԳԼՈՒԽ 3. ՀՀ ԿԱՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՁԱՐԳԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ</b>	
(ՄԻՋՈՑՆԵՐԸ)	27
3.1 ԳԻՏԵԼԻԲԱՀԵՆՔ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ	30
3.2 ԻՆՈՎԱՅԻՈՆ ՁԱՐԳԱՅՈՒՄ	32
3.3 ԱՐՏԱՀԱՆՍԱՆ ԽԹԱՆՈՒՄ	35
3.4 ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ	37
<b>ԳԼՈՒԽ 4. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՄԱՉԱՓ ՁԱՐԳԱՅՈՒՄ</b>	42
<b>ԳԼՈՒԽ 5. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ</b>	47

## ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետությունն իրականություն դարձավ համաժողովրդական կողմնորոշման արդյունքում, երբ ազգային ինքնագիտակցությունը հանգեց քաղաքական նոր արժեքներ ներմուծելու անհրաժեշտությանը: Դրա հետ կապվեց ինչպես գոյության պահպանության և առաջընթացի հրամայականը, այնպես էլ՝ վաղեմի հիմնախնդիրները հնարավորինս արագ լուծված տեսնելու ցանկությունը: Վերջինս իրողություն դառնալու հնարավորություն ունի, եթե երկիրը միասնական ջանքերն ուղղորդի տնտեսական զարգացման ամուր հիմքերի կառուցմանը և արդյունավետ կերպով ներգրավվի համաշխարհային զարգացումների գործընթացում:

Տնտեսական գործընթացների արդյունավետության ապահովման կարևորագույն նախապայմանը երկրում սոցիալական համաձայնության վրա խարսխված բարոյահոգեբանական առողջ և կառուցողական միջավայրի առկայությունն է, ինչը պահանջում է ամուր գաղափարախոսական հիմքեր: Սեփական արժեքային համակարգի գերակայության պայմաններում միայն կարող է հասարակությունը բնականոն գործել՝ դրսևորելով իրեն հատուկ վարքագիծ: Ընդ որում, այն խիստ նպաստավոր է մեր երկրում ժողովրդավարական և շուկայական հարաբերությունների բարձր մակարդակ ապահովելու համար, քանզի հայ հասարակությունը առանձնանում է աշխատասիրությամբ և կառուցողական հարմարվողականությամբ, իսկ նորի նկատմամբ բաց լինելու և դրան ստեղծագործաբար արձագանքելու հատկանիշներն առաջընթացի կարևորագույն նախադրյալներից են:

Երկրում կառուցողական մթնոլորտ կարելի է ձևավորել վարվող քաղաքականության (այդ թվում՝ տնտեսական) միանշանակ, մատչելի մեկնաբանության և իրականացման գործընթացներում հանրության լիարժեք մասնակցության ու նրանց տարաբնույթ շահերը հաշվի առնելու դեպքում: Նպատակին հասնելու սկզբունքները, մեթոդներն ու եղանակները, ասել է թե քաղաքականությունը, պետք է ընկալելի և ընդունելի լինեն մեր և միջազգային հանրության կողմից, որպեսզի ստանան նրանց անվերապահ աջակցությունը: Հայաստանում առկա տնտեսական շատ հիմնախնդիրներ մեծապես կապված են համաշխարհային տնտեսության, ինչպես նաև տարածաշրջանի իրավիճակի ու զարգացման միտումների հետ, ուստի համալիր լուծումներ գտնելու գործում անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր գործոնների ազդեցությունը: Չարգացման շեմին կանգնած երկիրն իրավունք չունի չօգտվել արդեն այս փուլն անցած երկրների փորձից:

Որևէ ռազմավարական, քաղաքականության հիմնադրույթներ պարունակող փաստաթուղթ գործնականում կիրառվելու և իր նպատակին ծառայելու հնարավորություն ունի, եթե այն տեղին է ժամանակաշրջանի մեջ և դիպուկ՝ քաղաքականություն ամրագրող այլ փաստաթղթերի շարքում: Հայաստանում, սոցիալ-տնտեսական ճգնաժամի հաղթահարման և որոշակիորեն կայունացման փուլին հաջորդեց ծրագրային, պլանավորված առաջընթացի շրջանը: Նպատակներն ու խնդիրները, որոնց լուծումները հրատապ էին ոչ միայն մեր, այլ նաև միջազգային հանրության համար, մշակվեցին մասնագիտական մակարդակով և ամրագրվեցին քաղաքական որոշումներով:

Անցումային վերափոխումների գործընթացում, երբ Հայաստանում արմատական փոխակերպումները հանրության սոցիալ-տնտեսական կյանքում առաջ բերեցին սոցիալական հիմքերի խարխլմանը և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում հնարավորությունների կտրուկ անկմանը դիմակայելու խնդիրներ, ՀՀ կառավարությունը համալիր միջոցառումներ ձեռնարկեց դրանց հաղթահարման ուղղությամբ: Միասնական ջանքերով իրականացված և շարունակվող «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը» էականորեն մեղմեց իրավիճակը՝ արտահայտելով ժամանակի մարտահրավերներին մեր պետության համակարգված արձագանքելու հաստատակամությունը: Նշված հիմնախնդիրների մեղմմանն, ինչպես նաև մեզանում ժողովրդավարական արժեքների արմատավորմանն էր ուղղված նաև «Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը»: Համակարգված, ծրագրային գործելաոճը դրսևորվեց նաև ներօլորտային քաղաքականության շրջանակներում: Հայեցակարգեր, զարգացման միջնաժամկետ և նպատակային գործողությունների ծրագրեր մշակվեցին տնտեսության ճյուղերի, գիտության և կրթության, հասարակական կյանքի գրեթե բոլոր բնագավառների զարգացման համար: Ինստիտուցիոնալ երաշխավորված առաջընթաց ապահովելու տեսանկյունից առանցքային նպատակադրում էր Եվրամիությանը Հայաստանի ինտեգրման քաղաքականության որդեգրումը, ինչի հիմքը դրվեց Գործընկերության և Համագործակցության Համաձայնագրով (ԳՀՀ) և ԳՀՀ իրականացման ազգային ծրագրով: Այնուհետև, ԵՄ հետ Եվրոպական Հարևանության Քաղաքականություն (ԵՀՔ) ներքո գործողությունների ծրագրի ստորագրումը նոր էջ բացեց ԵՄ-Հայաստան հարաբերություններում: Ի վերջո, քաղաքականության համակարգված, համալիր և երկարաժամկետ պլանավորման դրսևորում էր «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության» ընդունումը, ինչը պետականության կայացման տեսանկյունից առանցքային կարևորության քայլ է:

Ռ-ազմավարական նշանակության այս բոլոր ծրագրային փաստաթղթերը նպատակային իրագործման համար, ակնհայտորեն, տնտեսական ամուր հիմքերի կարիք ունեն: Տարաբնույթ նպատակները կմնան միայն ցանկություններ, եթե թրագնահատվի տնտեսական գործունեների դերը: Անհրաժեշտ է, որպեսզի տնտեսական ներուժն ունակ լինի սպասարկելու հասարակության ձգտումները, ակնկալիքներն ու առաջընթացը:

***Դրա համար հարկ է առաջնորդվել հստակ մշակված տնտեսական քաղաքականությամբ՝ ռազմավարական մակարդակով ամրագրելով տնտեսական զարգացման հիմնարար սկզբունքները և գործառնական հարաբերությունների հիմքերը, արդյունավետ տնտեսավարման գործուն խթանների համակարգը, տնտեսական հարաբերություններում հասարակության պատշաճ մասնակցության իրական շարժառիթները, ինչպես նաև պետության խնդիրներն ու անելիքները դրանց ուղղությամբ:***

***ՀՀ կայուն տնտեսական զարգացման ռազմավարությունը կոչված է ծառայելու Հայաստանի տնտեսության երկարատև կայուն զարգացման և մրցունակության ապահովման, համաշխարհային տնտեսությանն ինտեգրման, երկրում արժանավայել կենսամակարդակի և ազգային անվտանգության ապահովման նպատակներին:***

ՀՀ կայուն տնտեսական զարգացման ռազմավարությունը ձևավորվել է համապատասխան միջազգային փորձի և համընդհանուր զարգացումների միտումների, ինչպես նաև մեր տնտեսության և մեր հասարակության ներուժի ու ձգտումների համադրմամբ:

Սույն ռազմավարությունը չի հավակնում ծառայելու որպես միանշանակ դեղատոմս, սակայն ամրագրված սկզբունքներն ու մոտեցումները այն հիմնական ուղենիշներն են, որոնք առաջնորդելու են այլ տնտեսական քաղաքականության փաստաթղթերի մշակման և իրականացման գործընթացում:

Ռ-ազմավարության մեջ ամրագրված մոտեցումները կիրառելի են օբյեկտիվ անհրաժեշտությամբ թելադրված ժամանակահատվածի ընթացքում: Պայմանների և սահմանափակումների էական փոփոխությունների ի հայտ գալու դեպքում ընդունված նոր ռազմավարությունը կամրագրի տնտեսական զարգացման այլ նպատակներ և դրանց իրականացման այլ մեխանիզմներ:

Ռ-ազմավարական մոտեցումների գործնական դրսևորումները, ինչպես նաև զարգացման մարտավարությունը կարտահայտվեն առանձին միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրային փաստաթղթերում:

**ԳԼՈՒԽ 1. ՀՀ ԿԱՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

1. Հայաստանն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն ստեղծելու վճռականությամբ տնտեսության մեջ որդեգրեց շուկայական հարաբերություններին անցման քաղաքականությունը, որի իրականացման նպատակով սկիզբ դրվեց ազատական արժեքների վրա հիմնված տնտեսական բարեփոխումների գործընթացին: Ստեղծված սոցիալ-տնտեսական իրավիճակում, երբ Հայաստանը դուրս է եկել խոր անկման շրջանից և արդեն մեկ հնգամյակից ավելի արձանագրում է երկնիշ տնտեսական աճ, օրախնդիր է դարձել **տնտեսության հեռանկարային զարգացման համար կայուն հիմքերի ապահովման հարցը, ինչը կրկնակի հրատապություն է ձեռք բերում, երբ մի կողմից աճի տեմպերի պահպանման, իսկ մյուս կողմից դրա արդյունավետության բարձրացման խնդիր կա, ասել է թե՛ տնտեսական աճը անհրաժեշտ է փոխակերպել տնտեսական զարգացման:** Այս համատեքստում տնտեսական առաջընթացը պահանջում է առավելապես որակական կատարելագործումներ, ինչը հանգում է քանակական աճին զուգընթաց որակական տնտեսական զարգացման ապահովման անհրաժեշտությանը: Որակական զարգացումներն են, որ կապահովեն հանրապետությունում կյանքի որակի մակարդակի համընդհանուր բարձրացում՝ տնտեսական աճի արդյունքները ծառայեցնելով հասարակական կյանքի բարելավմանը:
2. Համընդհանուր զարգացում ապահովելու անհրաժեշտությամբ համաշխարհային հանրությունն առաջ է քաշում միասնական ջանքերով որոշակի հիմնախնդիրներ լուծելու մոտեցումը, որոնց թվում հատկապես կարևորվում է աղքատության հաղթահարումը: Վերջինս իրական սպառնալիք է համամարդկային առավել հեռանկարային նպատակներին հասնելու համար: Հայաստանի պարագայում խնդիրն առավելապես մյուսակն ենթատեքստ ունի, սակայն հարկ է նկատի ունենալ, որ այն չի կարող երկար ժամանակ պահպանվել միայն այդպիսին: Տնտեսական զարգացման (առաջին հերթին տնտեսական, քանզի դրանով հնարավոր է աղքատության հիմնախնդիրը մեղմել «եկամտային» մակարդակում) հեռանկարային հիմքերն անհրաժեշտ է դնել հենց այսօր, հակառակ դեպքում վտանգված կլինեն թե՛ զարգացման, թե՛ աղքատության հաղթահարման նպատակները: Ընդ որում, ակնհայտ է մի կողմից իրականացված բարեփոխումների համար «վճարված» սոցիալական բարձր գինը, մյուս կողմից՝ փոխհատուցման և առաջընթացի ապահովման սրությունը:

***Այն երկրները, որոնք չեն կարողանում ապահովել զարգացման երկարաժամկետ հիմքեր, հիմնականում բնական և մարդկային ռեսուրսների աղբյուր են դառնում գլոբալ մտավոր ներուժը կենտրոնացնող զարգացած երկրների համար:***

3. Համաշխարհային պրակտիկայում տնտեսական քաղաքականության մեջ մինչ այժմ գերակայող պարադիգմի հիմնական ուղղությունը ռեսուրսների արդյունավետ բաշխումն է մեկ սերնդի կյանքի տևողության կտրվածքով, մինչդեռ զարգացման առավել երկարաժամկետ հիմնախնդիրների լուծման համար դա բավարար չէ: Ժամանակակից քաղաքակրթության առաջընթացը պայմանավորվում է կայուն զարգացման<sup>1</sup> ապահովմամբ, որի պարագայում առավել երաշխավորված կլինեն ներկա և ապագա սերունդների պահանջմունքների բավարարման հնարավորությունները: Հաջորդ սերունդների ապահովմանն ուղղված կայուն զարգացման պահանջն առաջ է քաշում տնտեսական, սոցիալական, բնապահպանական գերակայությունների հավասարակշռման և ներդաշնակեցման հարցը: Այստեղ է, որ զարգացման նշանակետը դարձել է մարդն՝ իր մտավոր, հոգևոր և ֆիզիկական արժեքներով և գոյատևման պայմաններով, իսկ սոցիալ-տնտեսական զարգացումը և շրջակա միջավայրի բարելավումը ոչ թե նպատակ են, այլ միջոց՝ մարդու և հասարակության (ազգի) կենսունակ զարգացման բնականոն ընթացքը բավարար մակարդակով ապահովելու համար: Հայաստանի համար, որպես զարգացող երկիր, կայուն զարգացման տնտեսական բաղադրիչն առանձնահատուկ առաջնայնություն է ստանում, քանի որ բոլոր ուղղություններով միաժամանակ ներդրումներ կատարելու հնարավորությունները սահմանափակ են, իսկ լրացուցիչ միջոցներ ստեղծվում են միայն տնտեսական զարգացման արդյունքում:

***Կայուն տնտեսական զարգացումն ուղղված է մարդկային զարգացմանը՝ ապահովելով ներկա և հետագա սերունդների արժանավայել կյանքի երկարաժամկետ երաշխիքներ: Հայաստանը որդեգրում է կայուն տնտեսական զարգացման ուղին՝ գիտակցելով երկրում կյանքի որակի հետևողական բարձրացման խնդրի անհետաձգելիության հրամայականը և նպատակադրվելով***

<sup>1</sup> Կայուն զարգացման հայեցակետի գործնական իրացման նկատմամբ ուշադրությունն աշխարհում գնալով մեծանում է: ՄԱԿ-ի՝ շրջակա միջավայրի և զարգացման համաժողովում (Ռիո-դե-ժանեյրո, 1992թ.) միջազգային հանրության կողմից փաստորեն ընդունվեց կայուն զարգացման հայեցակետի իրացման ծրագիրը: Կայուն զարգացման հայեցակետի տարածվածության հիմնական նախադրյալը 20-րդ դարի կեսերին աշխարհում տեղի ունեցած լրջագույն փոփոխություններն էին: 50-60-ական թվականներին զարգացող երկրների կողմից կիրառված զարգացման մոդելը ուղղորդված էր տնտեսական արդյունավետության ապահովմանը: Ընդունված էր, որ միայն տնտեսական համակարգի արդյունավետությունն է ընդունակ ճանապարհ հարթել դեպի համընդհանուր զարգացում, ինչպես երկրի ներսում, այնպես էլ ամբողջ աշխարհում: Այնուամենայնիվ, բազմաթիվ անգամ մատնանշվում էր բնության պաշարների անհամամասնական բարձր ծախսումների հիման վրա արդյունաբերական երկրների տնտեսական համակարգի չափազանց ցածր արդյունավետությունը: 70-ականների սկզբին զարգացող երկրներում աղքատ բնակչության աճող թվաքանակը և տնտեսական զարգացման առավելությունների բացակայությունը հանգեցրին եկամտների բաշխման միջոցով իրավիճակը շտկելու անմիջական փորձերի քանակի աճին: Պարզ էր դառնում, որ իրավիճակը շտկելու միակ ուղին համաշխարհային մակարդակով համաձայնեցված կոնկրետ գործողություններն են: ԵՄ-ը և ուղղություն է վերցրել դեպի կայուն զարգացում: Իրականացվող ցանկացած գործունեություն ԵՄ համայնքում է բնապահպանական պահանջների հետ: ԵՄ-ը զարգացման անկյունաքար է դրել հետևյալ պահանջները. ընդունվող տնտեսական, սոցիալական և բնապահպանական որոշումները պետք է փոխադարձաբար օժանդակեն, ամրապնդեն միմյանց և վնաս չհասցնեն հետագա սերունդների պահանջմունքների բավարարման հնարավորություններին:

*տեսանելի ապագայում ապահովել միջին եվրոպական տնտեսական զարգացման մակարդակ:*

**ԳԼՈՒԽ 2. ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ**

4. Սոցիալ-տնտեսական բարեփոխումների, տնտեսության անցումային փուլով պայմանավորված հիմնախնդիրների հաղթահարման և միջազգային ինտեգրման ուղղությամբ իրականացված հետևողական քայլերի արդյունքում Հայաստանի տնտեսությունը ներկայանում է հետևյալ բնութագրիչներով.

- 2006թ. ՀՆԱ մեկ շնչի հաշվով կազմել է 1989 դոլար (ՀՀ ԱՎԾ), գնողունակության համարժեքությունը հաշվի առած՝ մոտ 6000 դոլար: Համանման ցուցանիշը 2005թ. Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներում կազմել է մոտ 9000 դոլար, իսկ ԵՄ (15)՝ մոտ 30000 դոլար (Համաշխարհային Բանկ):
- Գլոբալ մրցունակության համաթվով (Համաշխարհային Տնտեսական Ֆորում) դասակարգված 125 երկրների շարքում զբաղեցնում է 82-րդ տեղը:
- Տնտեսական ազատականացման համաթվով (Հերիթեյջ Ֆաունդեյշն) դասակարգված 161 երկրների մեջ զբաղեցնում է 32-րդ տեղը:
- Մարդկային զարգացման համաթվով (Միացյալ Ազգերի Չարգացման Ծրագիր) դասակարգված 177 երկրների մեջ զբաղեցնում է 80-րդ տեղը:
- Ձեռնարկատիրությամբ զբաղվելու վարկանիշով (Համաշխարհային Բանկ) դասակարգված 175 երկրների մեջ զբաղեցնում է 34-րդ տեղը:
- Արտահանմանը սատարող վարկերի տրամադրման ռիսկայնության գործակիցը (Տնտեսական Համագործակցության և Չարգացման Կազմակերպություն) 7-րդ խմբից բարձրացել է 6-րդ խումբ:
- ՓՄՉ զարգացման համաթիվը (ՄԱԿ) 2006թ. կազմել է 237.2, 2005թ.՝ 171.9, 2004թ.՝ 117.8, 2003թ.՝ 82, 2002թ.՝ 58.1 դիմաց:
- ՀՀ պետբյուջեի եկամուտներն ու պաշտոնական տրանսֆերտները 2006թ. կազմել են ՀՆԱ 16.5%, հարկերն ու տուրքերը՝ 14.4%, պետական բյուջեի պակասուրդը՝ 0.6%: Արտաքին պետական պարտքը 1205.6 մլն դոլար է կամ ՀՆԱ 18.8% (ԱՎԾ):
- Աղքատության մակարդակը 2005թ. 29.8% է, ծայրահեղ աղքատությանը՝ 4,6%: Եկամուտների համակենտրոնացման Չինիի գործակիցը և ծախսերի համակենտրոնացման Չինիի գործակիցը 2005թ. կազմել են համապատասխանաբար 0.359 և 0.257 (ՀՀ ԱՎԾ):

- Կոռուպցիայի ընկալման համաթվով դասակարգված (Թրանսփերենսի Ինքերնեյշն) 163 երկրների շարքում զբաղեցնում է 93-րդ տեղը:
- Հայաստանն անդամակցում է մոտ 60 միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների (ՀՀ ԱԳՆ):

### **Տնտեսական (SWOT) վերլուծություն**

5. Տնտեսական վիճակի նման վերլուծության նպատակն է բացահայտել այն բոլոր հիմնական գործոնները, որոնք կարող են ներգործել տնտեսական զարգացման գործընթացի վրա: Այս վերլուծությունը հնարավորություն է տալիս գնահատել և դասակարգել այդ գործոնները ըստ ազդեցության բնույթի և որակի, ինչը մեծապես օգնում է իրատեսական և կշռադատված տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման գործում: Հայաստանի տնտեսական զարգացման ռազմավարությունը ձևավորվում է նշված գործոնների համադրման արդյունքում:

### **Ուժեղ կողմեր**

6. Հայաստանի տնտեսության բացահայտված ուժեղ կողմերը հեռանկարային տնտեսական զարգացման հիմնական նախադրյալներն ու ռեսուրսներն են: Դրանց առկայությունը և/կամ դինամիկան Հայաստանի տնտեսական զարգացման միջոցների ընտրության և արդյունավետ գործարկման նախապայմաններն ու երաշխիքներն են: Հետևաբար, այս ուղղություններով իրականացվելու է պահպանության և շարունակական ամրապնդման քաղաքականություն՝ դրանք դասելով մարտավարական գերակայությունների շարքին:
7. Ձևավորված շուկայական հարաբերություններ, կայացած մասնավոր հատված:  
Հայաստանը տնտեսավարման ազատական արժեքային համակարգով և միջազգային կառույցների հետ համագործակցության բարձր մակարդակով կայացած շուկայական, որոշակիորեն դիվերսիֆիկացված տնտեսություն ունի: Իրականացված համակարգային վերափոխումների արդյունքում ազգային տնտեսություն են ներմուծվել շուկայական հարաբերություններին բնորոշ գրեթե բոլոր ինստիտուտները: Շուկայական հարաբերությունների հաստատման միջոցով հնարավորություն է ընձեռնվել ստեղծել և արմատավորել տնտեսական այնպիսի ինքնակարգավորվող մեխանիզմներ, որոնց պարագայում նվազագույնի կհասցվի տնտեսական գործընթացներում պետության ուղղակի ներգործության հնարավորությունը: Մասնավոր սեփականատիրական և գործարար ակտիվության արժեհամակարգային ամուր արմատները երաշխավորեցին Հայաստանում մասնավոր հատվածի

կայացումը, ինչի վկայությունը ստեղծված համախառն ներքին արդյունքում մասնավոր հատվածի մասնաբաժնի գերակշռությունն է:

*Տնտեսական ազատականության վարկանիշային դասակարգմամբ «Կառավարությունից ազատություն» ցուցանիշով Հայաստանի մակարդակը 2007թ. համար գնահատվել է 91.6% (առավելագույնը՝ 100%): Համանման մակարդակ է արձանագրվել նաև Հոնկոնգում: Վրաստանում այն կազմել է 91.3%, Մինգապորում՝ 86.2%, Լիտվայում՝ 76.6%, Լատվիայում՝ 69.2%, ԱՄՆ-ում՝ 67.5%, Էստոնիայում՝ 66.8%, Գերմանիայում՝ 48%:*  
*01.01.2007թ. դրությամբ գրանցված են 102.7 հազար տնտեսավարող սուբյեկտներ, որոնց մեջ անհատ ձեռնարկատերերի տեսակարար կշիռը կազմել է 47.6%: Միայն 2006թ. գրանցված 10320 տնտեսավարող սուբյեկտների 71% անհատ ձեռնարկատերեր են: Մասնավոր հատվածի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2006 թ. կազմել է մոտ 85%:*

[www.heritage.org](http://www.heritage.org)  
 DD ²il, DD éáóÇ³É-íYi»é³PÝ iÇ×³IÁ,2006Ā NāóÝi³ñ-¹»İi»Üμ»ñ  
[www.EBRD.org](http://www.EBRD.org)

8. Տնտեսական քաղաքականության կայունություն, կանխատեսելիություն, տնտեսական

աճ: Հայաստանը շուրջ 15 տարի հետևողականորեն իրականացնում է հռչակված տնտեսական քաղաքականությունը, ինչի կայունությունը նպաստում է տնտեսության կանխատեսելիության բարձրացմանը և դիվերսիֆիկացիայի խորացմանը: Արդյունքում, հարաբերականորեն կայուն գնաճի պայմաններում հաջողվել է արձանագրել աճի բավականին բարձր տեմպեր: Ընդ որում, տնտեսական աճի դինամիկան զուգորդվում է առավել բարձր ավելացված արժեք ստեղծելու աճող հակվածությամբ: Տնտեսության ճյուղերի կողմից բարձր ավելացված արժեքի ստեղծման միտումը հետագայում ևս ՀՆԱ աճի բարձր տեմպի և ռեսուրսների ռացիոնալ օգտագործման հիմքեր են ապահովում: Տնտեսական կայունության մասին են վկայում նաև ընդհանուր օտարերկրյա ներդրումների ծավալների աճի միտումները:

*ՀՆԱ աճի ցուցանիշով 170 երկրների մեջ Հայաստանը վերջին տարիներին գտնվել է առաջինների շարքում: Եթե 1994թ. տնտեսության բոլոր ճյուղերում համախառն ավելացված արժեքը կազմում էր համախառն թողարկման 46%-ը, ապա 2006թ. այն 57.1% է: Հայաստանի գյուղատնտեսության համաթվի վրա դրականորեն է անդրադարձել մակրոտնտեսական իրավիճակը, ըստ որի 125 երկրների շարքում Հայաստանը 2006թ. գրադեցրել է 71-րդ տեղը: 2006թ. ՀՆԱ ձևավորմանն արդյունաբերության մասնակցության չափը կազմել է 15.1%, գյուղատնտեսությանը՝ 17.7%, շինարարությանը՝ 26.7%, առևտրինը և հանրային սննդինը՝ 10.2%, տրանսպորտինն ու կապինը՝ 5.9%, այլ ճյուղերին՝ 16.2%: Համախառն ներդրումները ՀՆԱ-ում 2005թ. կազմել են 26.3%: 1998-2005թթ. իրական հատվածում իրականացված ընդհանուր օտարերկրյա ներդրումները կազմել են 2260 մլն դոլար, որից ուղղակի ներդրումները՝ 71.2%: Ընդհանուր օտարերկրյա ներդրումների աճի միջին տեմպը կազմել է 131.7%, ուղղակի ներդրումներինը՝ 125.6%: «Ներդրումային ազատություն» ցուցանիշով Հայաստանի մակարդակը 2007թ. համար գնահատվել է 60%:*

[www.worldbank.org](http://www.worldbank.org)  
[www.weforum.org/GCI](http://www.weforum.org/GCI)  
 DD ²il, DD éáóÇ³É-íYi»é³PÝ iÇ×³IÁ 1994,2006Ā. NāóÝi³ñ-¹»İi»Üμ»ñ,  
 DD ²il, D³U³é³YÇ iÇ×³I³-ñ³Y i³ñ»-Çñü, 2002Ā.,2006Ā.  
[www.heritage.org/countries/Armenia](http://www.heritage.org/countries/Armenia)

9. Տնտեսավարման համար ազատական օրենսդրական դաշտ, պետություն-գործարար կառուցողական համագործակցության աստիճան: Չնավորված է շուկայական տնտեսակարգին բնորոշ բավականաչափ ազատական օրենսդրական դաշտ: Որդեգրված ազատական սկզբունքներն ու մոտեցումներն ապահովել են բարենպաստ գործարար միջավայրի իրավական և ինստիտուցիոնալ հենքը: Հասարակության մեջ արմատացել է քաղաքացիաիրավական փոխհարաբերություններում պայմանագրային հիմունքներով գործելու մոտեցումը: Պետության կողմից հետևողականորեն իրականացված տնտեսական բարեփոխումների, գործարար ակտիվության բարձր աստիճանի շնորհիվ երկրի գործարար միջավայրը շարունակականորեն բարելավվում է: Պետություն-գործարար երկխոսության կայացումը նպաստում է տնտեսական զարգացմանն ուղղված կառուցողական որոշումների ընդունմանը: Պետական հատուկ վերաբերմունք է ձևավորվել հատկապես փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՉ) նկատմամբ, կայացել է ՓՄՉ պետական աջակցության գործուն համակարգ:

*Ձեռնարկատիրական գործունեությանը զբաղվելու դյուրինությանը դասակարգված 175 երկրների մեջ Հայաստանը զբաղեցնում է 34-րդ տեղը: Առանձին բաղադրիչներով Հայաստանը զբաղեցրել է. «Ձեռնարկատիրական գործունեություն սկսելը»՝ 46-րդ, «Սեփականության գրանցումը»՝ 2-րդ, «Լիցենզավորված գործունեությունը»՝ 36-րդ, «Պայմանագրերի կնքումը»՝ 18-րդ, «Ձեռնարկատիրական գործունեության դադարեցումը»՝ 40-րդ հորիզոնականները: Սեյ ալլ դասակարգմամբ Հայաստանի «Գործարարության ազատության» մակարդակը 2007թ. համար գնահատվել է 84.5%: 2006թ. ՓՄՉ մասնաբաժինը ՀՆԱ-ում կազմել է ավելի քան 40%:*

www.WorldBank/Doing Business/Armenia, 2006  
www.heritage.org/countries/Armenia  
ĐĐ 600 1/2, 600 4ÉãñÁ Đ³Ú²er³Ýá6Û, 2006.Ā

10. Արտաքին առևտրի ազատական ռեժիմ: Տարիֆային, ոչ տարիֆային կարգավորման, մաքսային վարչարարության շարունակական բարելավման ուղղությամբ իրականացված բարեփոխումներն ապահովել են նպաստավոր պայմաններ արտաքին առևտրի աշխուժացման համար: Հայաստանի անդամակցությունը Առևտրի Համաշխարհային Կազմակերպությանը (ԱՀԿ) ապահովեց 150 երկրներում հայաստանյան ապրանքների և ծառայությունների նկատմամբ ոչ խտրական մոտեցման կիրառումը:

Էական դրական տեղաշարժ է նկատվում ներմուծման կառուցվածքում՝ ի հաշիվ արդյունաբերաարտադրական նշանակության ապրանքատեսակների ծավալների աճի: Նշված ապրանքների ներկրումը տնտեսության զարգացման ներկա փուլում պայմանավորված է արտադրության վերազինման անհրաժեշտությամբ և կապիտալ բնույթի ապրանքատեսակների նկատմամբ պահանջարկի մեծացմամբ:

Հայաստանի «Առևտրի ազատության» մակարդակը 2007թ. համար գնահատվել է 75.6%: Հայաստանի տնտեսության բացվածության ցուցանիշն ընդհանուր առմամբ ունեցել է աճի միտում՝ 2005թ. կազմելով 67,5%: Հայաստանի ներմուծման ծածկույթը 2006թ. կազմել է 46%՝ 1998թ. 24% դիմաց: 2006թ. ներմուծման 121.8% աճի տեմպի պայմաններում մեքենաների, սարքավորումների ներմուծման աճի տեմպը կազմել է 131,2%:

www.heritage.org/countries/Armenia  
 DD շի, DD eáóÇ³É-íÝi»ë³Ý iÇ×³ÍÁ, 2006Á. NádÝi³ñ-«I»Üμ»ñ,  
 DD շի D³Ü³ë³ÝÇ iÇ×³Í³-ñ³Ý i³ñ»-Çñü, 2002Á.,2006Á.

11. Գիտատեխնիկական առաջընթացի օբյեկտիվ նախադրյալներ, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ներուժ: Հայաստանում բնական պաշարների սակավությունը յուրօրինակ խթան է ազդի մտավոր բնատուր ներուժի հնարավորինս դրսևորման, համախմբված և ռացիոնալ օգտագործման համար, ինչը կարևորագույն նախադրյալ է ինովացիոն զարգացման տեսանկյունից: Գիտական ներուժի առկայությունը իրական նախադրյալ է տնտեսությունը գիտելիքի հենքի վրա կայացնելու և տեխնոլոգիական առաջընթաց ապահովելու համար: Հայաստանում բավականին արագ զարգանում է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը: Աճում է ինտերնետ օգտագործողների թիվը: Բարձր է ոլորտում զբաղվող մասնագետների մակարդակը: Հասարակության մոտ զգալի է տնտեսության վրա ոլորտի էական ազդեցության և զարգացման գործում մեծ նշանակության ընկալման աստիճանը:

Գիտելիքահենք Տնտեսության Համաթիվը (ԳՏՀ) Հայաստանի համար 2006թ.կազմել է 5.41 (առավելագույնը՝ 10): Աշխարհի միջին ցուցանիշը կազմել է 5.59, Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներինը՝ 6.12, իսկ Արևմտյան Եվրոպայինը՝ 8.32: Համաթիվը ձևավորվում է 4 բաղադրիչների հիման վրա, որոնք Հայաստանի համար արձանագրվել են. տնտեսական խթաններ՝ 5.56, կրթություն՝ 6.17, տեղեկատվական ենթակառուցվածք՝ 3.81, ինովացիոն համակարգ՝ 6.06: Վերջինիս (ինովացիոն համակարգի գործակից) մակարդակի ձևավորմանը նպաստել են համախառն օտարերկրյա ուղղակի ներդրումներ/ՀՆԱ (7.95), հետազոտողների թվաքանակ (6.38), գիտատեխնիկական հրապարակումների քանակ/մլն բնակչություն (6.41) հարաբերական ցուցանիշները: Օ³ñ'Í³ÚÇÝ ½³ñ-³óÜ³Ý Ի³Ú³ÁiÇ iñ³ 'ñ³Í³Yáñ»Ý ³½¹»É ¿ N³iÍ³á»ë ä³±³N³ë բնակչության գրագիտության մակարդակը, ինչը կազմել է 99.4%՝ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրների 99.2%-ի դիմաց: 2006թ. ՀՆԱ-ում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի բաժինը կազմում է մոտ 2% (2001թ՝ 0,35%): Այս ցուցանիշով 2003թ. արձանագրվել է Իռլանդիայում՝ 8.62, Իսրայելում՝ 3.99, Հնդկաստանում՝ 2.0, Կանադայում և ԱՄՆ-ում՝ մոտ 2,3%, Գերմանիայում՝ 1.38, Ռուսաստանում՝ 0.11%: Ոլորտում ակտիվ աշխատում են շուրջ 165 ընկերություններ, արտադրության ծավալը գնահատվել է շուրջ 80 մլն դոլար, որից մոտ 85% արտահանվել է:

www.worldbank.org/KEI  
 www.hdr.undp.org/hdr2006  
 EIF, The Guide to the Armenian information technology companies

12. Ինովացիոն զարգացման ինստիտուցիոնալ հենք: Երկրում ինովացիոն գործընթացների աշխուժացման, ազգային ինովացիոն համակարգի ձևավորման առաջնային քայլերը, այն է՝ իրավական դաշտի ձևավորումն ու ծրագրային

քաղաքականության մշակումը գտնվում են ավարտական փուլում: Տնտեսական զարգացման գործում ինովացիոն առաջընթացի ապահովման գիտակցումը և այդ ուղղությամբ համակարգված գործելու վճռականությունը Հայաստանում դրսևորվում են իրական գործողություններով:

*2005թ. ՀՀ կառավարության կողմից հաստատվել են «Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն գործունեության հայեցակարգը» և «Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն համակարգի ձևավորման և զարգացման 2005-2010 թվականների ծրագիրը»: 2006թ. ընդունվել է «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը: Համակարգված ձևով իրականացվում են նշված օրենքից և ծրագրից բխող միջոցառումները:*

*www.minted.am*

13. Ռիվերսիֆիկացված էներգետիկ համակարգ: Հայաստանն ունի ձևավորված էներգետիկ համակարգ: Էներգետիկ համակարգին ճկունություն և կայունություն է հաղորդում աղբյուրների բազմատեսակությունը: Ընդհանուր համակարգում գործում են ԱԷԿ-ը, ՀԷԿ-երը, ՋԷԿ-երը: Առկա է էլեկտրաէներգիայի արտադրության և արտահանման ծավալների ընդլայնման ներուժ: Հայաստանն ունի հողմաէներգետիկայի բավականին զգալի ռեսուրսներ: Մեծ է արևային էներգիայի ներուժը, որի օգտագործումը ջերմային էներգիա ստանալու նպատակով կարող է զգալիորեն նվազեցնել ներկրվող էներգակիրների քանակը: Հայաստանի համար բավականին հեռանկարային է երկրաջերմային ռեսուրսների ներուժի օգտագործումը: Ներկայումս իրականացվող երկրաջերմային ռեսուրսների հետազոտման աշխատանքների դրական արդյունքների դեպքում, որպես վերականգնվող էներգառեսուրս, դրանց հետագա իրացումը հրապուրիչ կարող է դառնալ ինչպես մասնավոր ներդրողների, այնպես էլ միջազգային ֆինանսական հաստատությունների համար: Սեփական էներգետիկ պաշարներին է դասվում էներգախնայողությունը:

*2000-2005թթ. էլեկտրակայանների կողմից թողարկվել է 35.1 մլրդ կՎտ.ժամ էլեկտրաէներգիա, որից ՋԷԿ-երը՝ 34.3%, ԱԷԿ-ը՝ 38.2%, ՀԷԿ-երը՝ 27.5%: 2005թ. էլեկտրակայանների ընդհանուր հզորությունը կազմել է 3205,6 հազար կՎտժ, որից ՋԷԿ-երը՝ 55,4%, ԱԷԿ-ը՝ 12,7%, ՀԷԿ-երը՝ 31,9%: Նշված ժամանակահատվածում արտահանվել է 4.6 մլրդ կՎտժ, կամ արտադրված էներգիայի 7.8%-ը: Հողմաէներգետիկայի տեսական պոտենցիալը գնահատվում է 10.7 ԳՎտժ, տեխնիկապես մատչելին՝ 10% հզորության գործակցի դեպքում, մոտ 1.1 ԳՎտժ: 1ք/մ հորիզոնական մակերևույթի վրա արևային էներգիայի հոսքի միջին տարեկան քանակը կազմում է 1720 կՎտժ/ք/մ (միջին Եվրոպական 1000 կՎտժ/ք/մ), իսկ ՀՀ տարածքի մեկ քառորդը օժտված է 1850 կՎտժ/ք/մ տարի ինտենսիվությամբ արևային էներգիայի ռեսուրսներով: Սևանի ավազանի արևափայլը կարող է համարվել ռեկորդային՝ 2800 ժամ: Տարեկան ուղիղ ճառագայթման մասնաբաժինը ամբողջ տարածքում ևս զգալի է՝ մոտ 65-70%, որը համակենտրոնացնող կոլեկտորների կիրառման տեսանկյունից բավականին հատկանշական է: Մոտավոր գնահատականով էներգախնայողությունը կարող է կազմել տնտեսության մեջ սպառվող էներգիայի մինչև 20%-ը:*

*ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2005, 2006թ.թ.*

*ՀՀ տնտեսության զարգացման համատեքստում էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարությունը*

14. Արդյունաբերական ներուժ: Հայաստանում հանքահումքային պաշարները (պղինձ, մոլիբդեն, ոսկի և այլն), ինչպես նաև արդյունաբերական բազայի իներցիոն կարողությունները (շենքեր և շինություններ, ինժեներատեխնիկական կադրեր, տեխնոլոգիական հնարավորություններ, ենթակառուցվածք) արդիականացման պարագայում ունակ են հարմարվելու ձևավորված շուկայական կոնյուկտուրային: Հանքարդյունաբերական և վերամշակող ճյուղերում (քիմիական, սննդի, ակնագործության) արձանագրված փոքրաքանակ, սակայն ուշագրավ հաջողությունները վկայում են այս ճյուղերի ներդրումային պոտենցիալ գրավչության և հետագա զարգացման հնարավորության մասին:

*2006թ. արդյունաբերության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմել է 15.1%: Արդյունաբերության ընդհանուր ծավալում մշակող արդյունաբերության տեսակարար կշիռը կազմում է 65.0%, հանքագործականը՝ 17.4%: Մշակող արդյունաբերության մեջ սննդի արդյունաբերության տեսակարար կշիռը կազմում է 45.4%, մետաղագործականը՝ 26.2%, քիմիականը՝ 3.5%: Ընդհանուր արտահանման ծավալում թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, թանկարժեք մետաղների և դրանցից իրերի արտահանումը կազմել է 31.9%, ոչ թանկարժեք մետաղներինը և դրանցից իրերինը՝ 27.9%, պատրաստի սննդի արտադրանքինը՝ 9,5%, հանքահումքային արտադրանքինը՝ 13.6%, քիմիական արտադրանքինը՝ 3.2%:*

*ՀՀ ԱՎԾ, Երջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում, 2006  
ՀՀ ԱՎԾ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2006թ. հունվար-դեկտեմբեր*

15. Շինարարության ոլորտի զարգացման ներուժ: Շինանյութերի հարուստ բնական պաշարները (բազալտ, տրավերտին, պեռլիտ, տուֆ և այլն) և արտադրությունը, ինչպես նաև ազգային հոգեկերտվածքը նպաստում են շինարարության ոլորտի զարգացմանը: Ոլորտում աճում է արտահանման հակվածությունը ինչպես ծառայությունների մատուցման, այնպես էլ՝ ապրանքների մատակարարման միջոցով:

*2006թ. կապիտալ շինարարության աճի տեմպը կազմել է 137.1%, իսկ ոլորտում ավելացված արժեքը՝ ՀՆԱ-ի 26.7%-ը, 2005թ. 21.7%-ի դիմաց: Իրականացված շինարարության ծավալը 2000թ. համեմատությամբ աճել է 6.5 անգամ, իսկ շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր օգտակար մակերեսը՝ 1.8 անգամ: Բնակչության միջոցներով իրականացված բնակարանային շինարարության ծավալների աճի միջին տեմպը 2000-2006թթ. կազմել է 165.3%՝ պահպանելով անընդհատ աճի միտում, իսկ ֆինանսավորման տեսանկյունից բնակչության միջոցներին բաժին է ընկել միջին հաշվով ընդհանուրի մոտ 48.9%-ը: Հանրապետությունում արդյունահանվում են այնպիսի հազվագյուտ շինանյութեր, ինչպիսիք են պեռլիտը (2005թ. մարված ծավալը կազմել է 42.5 հազ. խ/մ), տրավերտինը (43.3 հազ. խ/մ), բազալտը (147.4 հազ. խ/մ), տուֆը (320.9 հազ. խ/մ), ինչպես նաև շուրջ 35 անուն այլ պինդ օգտակար հանածոներ, որոնցից 7-ի պաշարները մարվում են անկորուստ՝ պեռլիտը, լիտոիդային խիճը, կվարցիտը և այլն, իսկ մնացածների մարման կորուստը տատանվում է 1-65.9%-ի շրջակայքում՝ կապված դրանց ֆիզիկաքիմիական հատկությունների հետ:*

*ՀՀ ԱՎԾ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2006թ. հունվար-դեկտեմբեր,  
ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2005թ., 2006թ.  
ՀՀ ԱՎԾ, Երջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում,*

16. Գյուղատնտեսության զարգացման իրական նախադրյալներ: Հայաստանում բարենպաստ պայմաններ կան գյուղատնտեսության զարգացման համար: Դրա համար մշտական նախադրյալներ են ավանդական հմտությունները, որոշակի գյուղմթերքների բնական բարձր բերքատվությունն ու յուրահատուկ որակական և համային հատկությունները: Իրականացվում է ենթակառուցվածքի բարելավման ակտիվ քաղաքականություն (ռոտզման համակարգ, ճանապարհներ և այլն): Հայաստանը նպաստավոր պայմաններում է նաև շրջակա միջավայրի, խմելու ջրի պաշարների և որակի տեսանկյունից: Սրանց առկայությունը կարող է ապահովել էկոլոգիական մաքուր արտադրանքի թողարկումը, ինչը ժամանակակից համաշխարհային շուկայում մրցունակության երաշխիքներից է:

*2000-2006թթ. գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի միջին տարեկան աճը կազմել է 7.7%: Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի բերքատվությունը կազմում է. ցորենինը՝ 20.2g հա-ից (ԱՊՀ միջինը՝ 21.0g հա-ից), կարտոֆիլի՝ 164.5g հա-ից (ԱՊՀ միջինը՝ 145.4g հա-ից), բանջարեղենի՝ 289.0g հա-ից (ԱՊՀ միջինը՝ 172.8g հա-ից): Ջրի ընդհանուր պաշարները կազմում են 7015 մլն խ/մ.: Թարմ ջրի ջրառը 2000-2005թթ. կազմել է 2074.8 մլն խ/մ, որից օգտագործվել է 1346.2 մլն խ/մ, դրանից 84.2%-ն օգտագործվում է ռոտզման և գյուղատնտեսական նպատակներով, 8.5%-ը՝ արտադրական, իսկ 7.3%-ը տնտեսական և խմելու նպատակով: Հաշվառված են քաղցրահամ ջրերի 17 ստորերկրյա աղբյուրներ՝ 2130 մլն խ/մ գումարային պաշարով: Հանրապետության տարածքում հաշվառված է բուժական հանքային ջրերի 625 աղբյուր՝ 208 լ/վրկ գումարային պաշարով: Հանքային ջրերի ընդհանուր տարեկան հոսքը կազմում է 22 մլն խ/մ, որից 8.8 մլն խ/մ բարձր որակի է: Տարեկան 15000 խ/մ օգտագործվում է շշալցման, իսկ 25000 խ/մ՝ բուժական նպատակով: Փաստացի օգտագործվում է ընդհանուր տարեկան հոսքի չնչին մասը:*

*ԾԾ 31, Ծ3Մ3ԵԻՄԿ իՇ×3Ի3-նԻՄԿ ԻՆ»-Շնն, 2005,2006,*

*ՀՀ ԱՎԾ, Երջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում,2005*  
[www.cisst.com](http://www.cisst.com)

17. Ջրոսաշրջության զարգացման նախադրյալներ: Հայաստանի յուրահատուկ բնական-լանդշափտային և պատմա-ճարտարապետական մշակութային արժեքները ձևավորել են երկրի ինքնատիպ զբոսաշրջային նկարագիրը: Իրավական հիմքերի վրա են դրված զբոսաշրջության ինդուստրիայի շահառուների միջև փոխհարաբերությունները, տեղաբաշխման հատվածի որակի չափանիշները: Գրանցվում է հյուրանոցային, ռեստորանային, տրանսպորտային, ժամանցային, մշակութային ենթակառուցվածքների քանակական և որակական, ինչպես նաև զբոսաշրջային արդյունքի միջնորդավորված ծառայությունների առաջարկի անընդհատ աճ: Ջրոսաշրջային ոլորտից ստացված եկամուտները գնալով աճում են:

*2006թ. զբոսաշրջիկների թիվը կազմել է 381.1 հազ. մարդ: 2000-2006թթ. զբոսաշրջային այցելությունների աճի միջին տեմպը կազմել է 128.7%: Ներզնա զբոսաշրջությունից ստացված մուտքերը 2006թ. գնահատվում են ավելի քան 360.0 մլն դոլար:*

*ՀՀ ԱՎԾ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2000-2006թ. հունվար-դեկտեմբեր,*



տոկոսադրույքների մակարդակների տարբերությունը, մրցակցային միջավայրի, գերիշխող դիրքի չարաշահման վերահսկողությունն անբավարար է: Սրանք էապես գապում են տնտեսական առաջընթացը և մրցունակության մակարդակը:

*Հայաստանի գլոբալ մրցունակության մակարդակի (82-րդ տեղ) առումով զսպող գործոններ են հանդիսացել «Ինստիտուցիոնալ համակարգը»՝ 84-րդ տեղով, «Ենթակառուցվածքը»՝ 92-րդ տեղով, «Շուկայի արդյունավետությունը»՝ 104-րդ տեղով:*  
*Վարկային տոկոսադրույքը անընդհատ նվազում է, սակայն վարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը 2006թ. կազմել է ընդամենը 9.1%: Վարկերի մատչելիության համապատասխան գնահատմամբ Հայաստանը զբաղեցնում է 65-րդ տեղը 175 երկրների մեջ: Բաժնետոմսերի շուկայի կապիտալիզացիայի մոտավոր գնահատականը 2004թ. կազմել է 8.6 մլրդ դրամ: Վերջին հինգ տարիներին գործարքների ծավալ/ՀՆԱ և կապիտալիզացիա/ՀՆԱ ցուցանիշները նվազել են համապատասխանաբար 0.36%--0.09% և 1.66%-- 0.46%: Չարզացած երկրներում ՀՆԱ և կապիտալիզացիայի ցուցանիշները համադրելի մեծություններ են:*

www.weforum.org/GCI  
www.worldbank.org/Doing Business2006  
ՀՀ ԱՎԾ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2006թ. հունվար-դեկտեմբեր  
ՀՀ կենտրոնական բանկի տարեկան հաշվետվություն, 2005թ.

22. Ստվերային տնտեսության բարձր աստիճան, կոռուպցիա: Հարկերի հավաքագրման ցածր մակարդակը զուգորդվում է հարկային մուտքերի ոչ օպտիմալ կառուցվածքով: Չնայած հարկեր/ՀՆԱ հարաբերության վերջին տարիներին նկատվող դրական տեղաշարժերին, այնուամենայնիվ խիստ հրատապ է հարկային դաշտում վարչարարության կատարելագործման, ստվերային տնտեսության չափերի կրճատման հիմնահարցը: Ազատ մրցակցության ապահովման, գործարար միջավայրի գրավչության շարունակական բարձրացման տեսանկյունից զսպող ազդեցություն է թողնում կոռուպցիայի աստիճանը:

*«Հարկերի վճարումը» վարկանիշային գնահատմամբ Հայաստանը 175 երկրների մեջ զբաղեցնում է 148-րդ տեղը: ԱԱՀ-ով հարկվող ավելի քան 80 երկրների համախմբված բյուջեներում արտացոլված հարկային եկամուտները (ներառյալ բոլոր տուրքերը) կազմում են միջին կշռվածով ՀՆԱ-ի 27%-ը. Հայաստանի համապատասխան ցուցանիշը կազմել է 16-17%: Հարկերի կառուցվածքում ուղղակի հարկերի տեսակարար կշիռը նույն երկրներում տատանվում է 40-70% շրջակայքում, իսկ Հայաստանում՝ 27-30%: Ստվերային տնտեսությունը կազմում է ՀՆԱ մոտ 1/3-ը: Կոռուպցիայի ընկալման համաթվով (2.9) 163 երկրների շարքում Հայաստանը զբաղեցնում է 93-րդ տեղը:*

www.worldbank.org/Doing Business2006  
www.transparency.org  
www.weforum.org/GCI

23. Վառելիքաէներգետիկ ռեսուրսների սակավություն: Արդյունաբերական նշանակություն ունեցող տեղական հանածո վառելիքային պաշարների բացակայությունը և ընդհանրապես վառելիքաէներգետիկ պաշարների պակասը մշտապես կախվածության մեջ են դնում էներգետիկ համակարգը արտաքին աղբյուրներից:

Էներգետիկ համակարգի մաշվածության հետևանքով մեծ են իրացման կորուստները, իսկ Էներգոսպառման փոքր ծավալները մեծացնում են լրացուցիչ ներդրումների ռիսկայնության աստիճանը:

*Էներգատեսուրսների պակասն ինչպես այժմ, այնպես էլ ապագայում ստիպում է իրականացնել այն միջոց լրացնելու քաղաքականություն: 1995-2005թթ. կրիտիկական ներմուծումը կազմում է ընդհանուր ներմուծման 40-50%-ը, ընդ որում հանքային և միջուկային վառելիքի ներմուծումը կազմում է կրիտիկական ներմուծման 70-80%-ը: Բնակչության մեկ շնչի հաշվով էլեկտրատեներգիայի սպառումը 2005թ. կազմել է 1961.2 կՎտ/ժամ: 2001թ. տվյալներով մեկ շնչի հաշվով սպառվել է 1090 կՎտ/ժամ, այն դեպքում, երբ Չեխիայում այն կազմել է 5398, Հունգարիայում՝ 3441 կՎտ/ժամ:*

*ՃԾ ²իլ, Ծ²Մ³բ³ԿԿ իՇ×³Ի. ³³ԻԿ Գ³ն»-Շնն, 2001,2005,2006,  
 ՀՀ ԱՎԾ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2006թ. հունվար-դեկտեմբեր  
 www.worldbank.org*

24. Հեռահաղորդակցության մատչելիության և որակի պակաս, դեպի ծով անմիջական ելքի բացակայություն: Հայաստանում հեռահաղորդակցության համակարգի ներկա վիճակը լրջորեն զսպում է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացումը: Բացակայում են այլընտրանքային կապուղիները, ինտերնետ կապի որակը անբավարար է, տրամադրվող կապի գները՝ բարձր: Գեպի ծով անմիջական ելք չունենալու, ինչպես նաև այլընտրանքային ուղիների անհուսալի և անշահավետ լինելու հանգամանքը լուրջ խոչընդոտ է տնտեսության մրցունակության բարձրացման տեսանկյունից:

*Գիտելիքահենք Տնտեսության Համաթվի (ԳՏՀ) 2006թ. Հայաստանին շնորհված գնահատականի վրա բացասաբար է անդրադարձել «տեղեկատվական ենթակառուցվածք» բաղադրիչը (3.81), որը ձևավորվում է հեռախոսների, համակարգիչների, ինտերնետ օգտագործողների թվի հարաբերական ցուցանիշներով, ինչպես նաև միջազգային հեռախոսակապի գնի և ՀՆԱ նկատմամբ հեռահաղորդակցության վրա կատարված ծախսերի միջոցով: Համանման ցուցանիշով գնահատվում են Ֆինլանդիան՝ 8.84, Իսրայելը՝ 8.93, Էստոնիան՝ 8.76, Ռումինիան՝ 6.05, Ռուսաստանը՝ 5.98, Թուրքիան՝ 5.42:  
 Լինելով դեպի ծով անմիջական ելք չունեցող երկիր՝ արտահանումից ստացվող եկամտի մոտ 15%-ը ծախսվում է ապրանքների տարանցիկ փոխադրումներն ապահովելու համար, եթե հաշվի առնենք, որ անմիջականորեն դեպի ծով ելք ունեցող երկրներն այդ նույն նպատակով ծախսում են արտահանումից եկամտի 3-4 %-ը միայն:*

*www.worldbank.org/KEI  
 EIF, The Guide to the Armenian information technology companies*

25. Գիտական համակարգի ինստիտուցիոնալ հիմքերի անկատարություն, ֆինանսավորման ցածր մակարդակ, գիտություն-արտադրություն անբավարար համագործակցություն: Հայաստանը հետ է մնում կրթության և մասնավորապես մասնագիտական կրթության, ինչպես նաև գիտության պետական ֆինանսավորման ծավալներով: Խիստ անբավարար են նաև գիտության ֆինանսավորման մյուս աղբյուրները (մասնավոր հատված, օտարերկրյա աղբյուրներ): Իրականացված

գիտատեխնիկական աշխատանքների ծավալը ՀՆԱ նկատմամբ փոքր է: Թույլ է գիտության և արտադրության համագործակցության մակարդակը: Ցածր է արդյունաբերության գիտատարության աստիճանը: Խիստ անբավարար է հետազոտական, ինովացիոն գործունեության, ինչպես նաև գիտական ներուժի կիրառական հնարավորությունների հանդեպ հետաքրքրությունը տնտեսավարողների կողմից: Մեծ է տեխնոլոգիական խզվածքը:

*Հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերը պետական բյուջեից 1995թ. կազմել են բյուջեի 0.2 տոկոսը: Սկսած 1996թ. վիճակը կտրուկ փոխվել է՝ 2006թ. հասնելով 1.2%-ի: Չարգացած երկրներում այդ ցուցանիշը վերջին 20 տարիներին բավականին կայուն է և կազմում է՝ ԱՄՆ-ում 6-7%, Գերմանիայում, Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, Իտալիայում՝ 4-5%, Ճապոնիայում՝ 3-3.5%: Հետազոտությունների և մշակումների վրա կատարված պետական բյուջեի ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ 1995-2003թթ. կազմել են 0.14% (տատանվելով 0.04 -0.25%-ի միջակայքում): Այս ցուցանիշը ԵՄ երկրներում 2002թ. միջինում կազմել է 0.7%: ՀՀ-ում իրականացված գիտատեխնիկական աշխատանքների ծավալը ՀՆԱ նկատմամբ բավականին փոքր է: 1995թ. այն կազմել է 0.1%: 1996 թվականից միջին տարեկան աճը կազմել է 15%՝ 2005թ. հասնելով 0.4%-ի: Հայաստանը հետ է մնում կրթության և մասնավորապես մասնագիտական կրթության պետական ֆինանսավորման ծավալներով: Կրթության ոլորտի ծախսերը Հայաստանում 1997-2003թթ. կազմել են միջինում ՀՆԱ-ի 2.3%-ը՝ 2006թ. հասնելով 2.7%-ի: ՏՀԶԿ երկրների միջին ցուցանիշը կազմել է 4.7%: Չարգացած երկրներում պետությունն իր վրա է վերցնում գիտական ծախսերի 20-50%-ը: Ոլորտի ֆինանսավորման նույնչափ ծավալ ապահովում է արդյունաբերական հատվածը: Գործնականում բացակայում է համապատասխան գրանցում ստացած նորարարությունների պատենտների իրացումը:*

*ԵԾ 31, ԵՅՄԵԻՄԿ ԻՇ՝ՅԻՅԻՅԻՅ՝ՇՆՆ, 2001,2005,2006,  
www.undp.org*

26. Մասնավոր հատվածում գործարար կառավարման գաժր մակարդակ: Շուկայում հաստատուն մրցունակ դիրքեր զբաղեցնելու և պահպանելու, արտադրողականության շարունակական աճ ապահովելու, գործարար ռիսկերի կրճատման գործընթացը Հայաստանում ակնհայտորեն դանդաղում է, ի թիվս այլ գործոնների, նաև գործարար կառավարման անբավարար մակարդակի հետևանքով: Գործարար շրջանակներում ստրատեգիական պլանավորման, անձնակազմի, ֆինանսական միջոցների, որակի արդյունավետ կառավարման, ինչպես նաև շուկայում ապրանքների և ծառայությունների առաջնդման գործում մարքեթինգային գործելակերպի անտեսումը շարունակում է զսպել գործարարության մրցունակության աճը:

*Գլոբալ մրցունակության համաթվով դասակարգված 125 երկրների շարքում 82-րդ տեղ զբաղեցնելու հանգամանքը բացասական առումով պայմանավորված է նաև «Գործարար հղկվածություն» ցուցանիշով Հայաստանի ցածր մակարդակով (104-րդ տեղ):*

*www.weforum.org/GCI*

27. Տարածքային զարգացման անհամաչափություն: Հանրապետության տարածքային միավորները գտնվում են զարգացման խիստ տարբեր մակարդակներում ինչպես մայրաքաղաքի նկատմամբ, այնպես էլ միմյանց կամ գյուղ-քաղաք համեմատության մեջ: Տարածքներում տնտեսական բարեփոխումների արդյունքները դեռևս անբավարար են: Լիարժեք կայացած չէ գործարար միջավայրը, բավականին բարձր է գործազրկության մակարդակը, մասնավորապես նախկին արդյունաբերական քաղաքներում, զարգացման ցածր մակարդակի վրա են ենթակառուցվածքները:

*Արտահանման և ներմուծման մեծ մասը բաժին է ընկնում Երևանին՝ 2006թ. համապատասխանաբար 49.6 և 72.1%-ը, իսկ մարզերին՝ 0.1-25.6 և 0.5-12.9%: Տնտեսության ճյուղերի արտադրության ծավալների զգալի մասը նույնպես բաժին է ընկել Երևանին՝ կազմելով. արդյունաբերություն՝ 44.5%, շինարարություն՝ 88.8%, մանրածախ ապրանքաշրջանառություն՝ 86%, մատուցված ծառայություններ՝ 87.5%: Մարզերում՝ արդյունաբերություն՝ 0.6-18.8%, շինարարություն՝ 0.8-2.7%, մանրածախ ապրանքաշրջանառություն՝ 0.5-2.9%, մատուցված ծառայություններ՝ 0.3-2.2%: Գործազրկության մակարդակի ցուցանիշը գրեթե բոլոր մարզերում բարձր է միջին հանրապետական ցուցանիշից: 2000-2006թթ. գործազրկության մակարդակը կազմել է միջինը 9,4%, Երևանում՝ 9,3%, իսկ մարզերում տատանվել է 2%-ից (Արագածոտն) մինչև 22,4% (Շիրակ): Մարզերի մեծամասնությունում աղքատության ցուցանիշները գերազանցում են հանրապետության միջին ցուցանիշը՝ էականորեն տարբերվելով նաև միմյանցից: Միջին մակարդակի համեմատ որոշակի դրական շեղում ունեն Երևանը, ինչպես նաև Վայոց Ձորի, Տավուշի, Լոռվա մարզերը, մյուս մարզերն էապես զիջում են միջին ցուցանիշին:*

*ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետությունը մարզերով, 2006թ.*

### **Հնարավորություններ**

28. Ներքոհիշյալ գործոններն այն ուղղություններն են, որոնք տնտեսության ուժեղ կողմերի արդյունավետ օգտագործման պարագայում Հայաստանում կարող են ապահովել տնտեսական հեռանկարային զարգացումներ և, կիրառելով տնտեսական զարգացման ռազմավարական և հիմնավորված միջոցներ, կարող են մեղմել, չեզոքացնել կամ իսպառ վերացնել թույլ կողմերի ազդեցությունը: Հնարավորությունների ընտրությունը հիմնված է իրական ներուժի առկայության վրա: Համակողմանի տնտեսական քաղաքականության համատեքստում, սրանք գործնականում արտացոլում են հենց Հայաստանի տնտեսական զարգացման ռազմավարական միջոցները:

29. Համաշխարհային տնտեսության մեջ ինտեգրման խորացում: Ծուկայական ինստիտուտների լիարժեք կայացման պարագայում Հայաստանը կարող է առավելագույնս ինտեգրվել համաշխարհային տնտեսության մեջ: Ինտեգրման բարձր մակարդակը թույլ կտա էապես մեղմել ներքին շուկայի փոքր տարողությամբ, ռիսկայնության բարձր աստիճանով պայմանավորված դժվարությունները:

Վերջիններիս հաղթահարմանը կնպաստի նաև ԱՀԿ անդամակցությամբ ընձեռնված նոր հնարավորությունների արդյունավետ օգտագործումը: Միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը և համակարգված տնտեսական քաղաքականության իրականացումը հուսալի հիմքեր կապահովեն Հայաստանի տնտեսական կայունության և բացասական ներգործությունների նկատմամբ դիմադրողականության բարձրացման, ինչպես նաև տեխնոլոգիական և տնտեսական հետամնացության հաղթահարման համար:

30. ԵՄ ինտեգրման գործընթաց: Տնտեսության կայուն զարգացման կարևորագույն գրավականներից է Եվրամիությանը Հայաստանի ինտեգրման որդեգրված քաղաքականությունը և դրա հետևողական իրականացումը: Եվրամիությունն իր արժեքային համակարգով, ինստիտուցիոնալ կայացվածությամբ և տնտեսական հզորությամբ այն շարժիչ ուժն է, որն իր անդամ երկրներում խթանում է լայնածավալ բարեփոխումներ հասարակական կյանքի գրեթե բոլոր բնագավառներում, ինչպես նաև նպաստում կայուն զարգացման հիմքերի ձևավորմանը: Հայաստանի ԵՄ ինտեգրման հիմք հանդիսացող ԳՀՀ կարևոր դրույթներից է Հայաստանի պատրաստակամությունը՝ օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտը ԵՄ չափանիշներին շարունակական մոտարկման և համապատասխանեցման գործում, ինչի գործնական դրսևորումն էր ԳՀՀ իրականացման ազգային ծրագրի ընդունումը: ԵՀԶ ներքո ԵՄ հետ ստորագրված գործողությունների ծրագիրն ընդգրկում է հնգամյա համագործակցության լայն շրջանակ և ընդգծում ԳՀՀ իրականացման ազգային ծրագրի կարևորությունը: Ծրագրի իրականացման արդյունքում Հայաստանը կունենա որակապես նոր իրավական և ինստիտուցիոնալ համակարգ, առավել արդյունավետ գործող տնտեսություն, որոնք իրենց հերթին Հայաստանի կայուն տնտեսական զարգացման հենասյուներ են:

31. Գործարար միջավայրի բարելավմամբ ներդրումային ակտիվության աճի ապահովում: Տնտեսավարման համար նպաստավոր և կայուն իրավական դաշտի վերջնական ձևավորման, վարչարարության հնարավորինս պարզեցման և հստակեցման, շուկա մուտքի և ելքի պայմանների առավելագույնս դյուրացման հետևողական քաղաքականության իրականացումը կերաշխավորի երկրում գործարար և ներդրումային ակտիվության աճը, այդ թվում՝ օտարերկրյա ներդրումների մասով, մասնավորապես անդրազգային ընկերությունների մասնակցությամբ:

32. Մտավոր ներուժի նպատակային զարգացմամբ գիտելիքահենք տնտեսության ձևավորում: Մտավոր կարողությունները, գիտական ներուժը, կրթության նկատմամբ հակվածությունը Հայաստանի համար այն կարևորագույն ռեսուրսներն են, որոնք

քաղաքակրթության զարգացման ներկայիս փուլում առաջընթացի ամենաառանցքային գործոնների դերակատարությունն ունեն: Այդ ռեսուրսների կշռադաստված և լիարժեք օգտագործումը, զուգորդված դրանց շարունակական ընդլայնմամբ և որակական կատարելագործմամբ, դուրս կբերի տնտեսությունը գիտելիքահենք զարգացման ուղի: Այս նպատակի իրականացումը պահանջում է պետության, հասարակության և անհատի ջանքերի կենտրոնացում և համախմբված ուղղորդում:

33. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում: Հայաստանում տեղեկատվական տեխնոլոգիաների նպատակամղված զարգացումները կապահովեն տեղեկատվական հասարակության և էլեկտրոնային կառավարման համակարգի կայացման, արտադրության մեջ ավտոմատ համակարգերի համատարած կիրառման իրական հիմքեր, որոնք ելակետային կարևորագույն պայմաններն են տնտեսության գիտատարության բարձրացման համար: Ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը թույլ կտա ստեղծել նոր, բարձր որակավորում պահանջող և բարձր վարձատրությամբ աշխատանքային տեղեր, իսկ նպատակաուղղված ներդրումային քաղաքականությունը՝ օգտագործել աշխատանքային ռեսուրսները տնտեսության գիտատար ճյուղերում: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը թույլ կտա բարձրացնել տնտեսության բոլոր ճյուղերի ապրանքների և ծառայությունների մրցունակությունը համաաշխարհային շուկայում:

34. Էներգետիկ համակարգի կարողությունների լիարժեք օգտագործում, դիվերսիֆիկացիա: Երկրի էներգետիկ համակարգը մեծածավալ ներդրումներ ներգրավելու դեպքում մեծ կարողություններ ունի արդիականանալու և ավելացնելու էներգոարտադրության և իրացման ծավալները: Ատոմային էներգետիկայի բնագավառում կուտակված փորձն ու կադրային բազան բացառիկ հեռանկար են ձևավորում այդ ուղղությամբ հզորություններն ընդլայնելու համար: Բնակլիմայական ռեժիմը թույլ է տալիս զարգացումներ ապահովել նաև այլընտրանքային էներգետիկ աղբյուրների ուղղությամբ: Իրան-Հայաստան գազամուղի շահագործումը և Հայաստանում իրանական նավթի հնարավոր վերամշակումը երկրի էներգետիկ համակարգի խոր դիվերսիֆիկացման լուրջ հեռանկարներ է բացում:

35. Մրցակցային առավելությունների ձևավորում առկա համեմատական առավելություններ ունեցող ճյուղերում: Գունավոր մետալուրգիայի ճյուղում որոշակի մետաղական հանքահումքային պաշարները, ավանդական կարողությունները, ինչպես նաև համաաշխարհային շուկայում մետաղագործական արտադրանքի նկատմամբ աճող պահանջարկը իրական նախադրյալներ են ճյուղի մրցունակության

բարձրացման համար: Քիմիական արդյունաբերության (կաուչուկ, քիմիական մանրաթելեր, կորունդ և այլն) ճյուղի մի շարք ապրանքատեսակներ համաշխարհային շուկայում մրցակցային կայուն դիրքեր գրավելու ներուժ ունեն՝ հիմք ընդունելով առկա տեխնոլոգիական բազան և տարածաշրջանում դրանց առաջարկի սահմանափակությունը: Ադամանդագործության բնագավառում կադրային ներուժը, հմտությունները, ինչպես նաև ադամանդագործական արտադրանքի արտահանման դյուրինությունը Հայաստանի պարագայում արդարացնում են ոլորտի հետագա մրցունակության բարձրացմանն ուղղված միջոցառումները: Գյուղատնտեսության ոլորտում արտադրողականության, արդյունավետության բարձրացման ճանապարհով գյուղմթերքների և դրանց վերամշակման արդյունքների արտահանման խթանումը բարենպաստ մրցակցային դիրքեր կապահովի Հայաստանի համար: Հանրապետությունը շինարարական ծառայությունների և շինանյութերի արտադրության ներուժը կարող է օգտագործել միջազգային շուկաներում մրցունակ շինարարական և շինանյութեր արտահանող տեղական կազմակերպությունների գործունեության ակտիվացմամբ՝ միաժամանակ դրսևորելով կշռադատված մոտեցում՝ բնապահպանական աղետից խուսափելու համար: Հայաստանի յուրահատուկ զբոսաշրջային նկարագրի ամբողջացման և համաշխարհային հանրությանը պատշաճ ներկայացման պարագայում կարող են բազմապատկվել ոլորտից ստացված եկամուտները և, ինչը պակաս կարևոր չէ, փոխկապակցված զարգացումներ ապահովել տնտեսության ճյուղերի և սոցիալական հատվածի համար: Զբոսաշրջային հոսքերի ավելացումը կխթանի արհեստագործությունը, կնպաստի տարածքների զարգացմանը:

36. Սփյուռքի ներուժի օգտագործում երկրի խնդիրների լուծման համար: Հայկական սփյուռքի աշխարհագրական լայն ընդգրկումը և բազմաշերտ ներուժը, միասնական գաղափարախոսության շուրջ համախմբելու հաստատակամ քաղաքականություն իրականացնելու պարագայում, բացառիկ առավելություններ են տալիս երկրին՝ կենսական բոլոր խնդիրների համեմատականորեն արագ և դյուրին լուծման գործում: Սփյուռքահայության լայն ընդգրկվածությունն առաջավոր երկրների կառավարման, գիտակրթական և գործարար շրջանակներում Հայաստանի համար գիտելիքների ստացման և հմտությունների փոխանցման մեծ աղբյուրներ կարող է ապահովել:
37. Տարածքներում առկա ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացում: Տարածքներում գերակշիռ դերակատարություն ունեցող տնտեսության հատվածների արդյունավետության բարձրացումը, գյուղմթերքի վերամշակման խթանումը, երկարաժամկետ ֆինանսական ներդրումների ներգրավման ապահովումն, ինչպես

նաև տնտեսության այս կամ այն ճյուղում գիտատեխնիկական նորույթների ներդրումը և տնտեսության նոր հատվածների ձևավորման խթանումը կբերի տարածքային անհամամասնությունների զգալի համահարթեցմանը: Տարածքային միավորների աշխարհագրական դիրքը կարելի է օգտագործել սահմանամերձ առևտրի կազմակերպման համար, որը կխթանի տեղական արտադրանքի արտահանումը:

### ***Սպառնալիքներ***

38. Որպես սպառնալիքներ ամրագրված են այն գործոնները, որոնք ոչ միայն զսպում են զարգացման քաղաքականության արդյունավետ իրականացումը, այլ նաև սպառնում կամ շատ մոտ ապագայում կսպառնան Հայաստանի տնտեսական անվտանգությանը: Սրանք ներկայումս պահանջում են անհետաձգելի մեղմման քաղաքականության իրականացում՝ հետագայում ազդեցության առավելագույնս չեզոքացման քաղաքականությամբ վերափոխվելու պայմանով:

39. Գիտական ներուժի թուլացում և սպառում, տեխնոլոգիական հետամնացություն:

Գիտական կադրերի արտագաղթը, ինչպես նաև նրանց հոսունությունը այլ ոլորտներ, նվազեցնում է երկրի գիտատեխնիկական ներուժը՝ վտանգելով գիտելիքահենք տնտեսություն կառուցելու միջոցով երկրի զարգացման հեռանկարը: Քանակապես գնահատել երկրի տնտեսության կորուստը արտագաղթից բավականին դժվար է, սակայն «ուղեղների հոսքը» ակնհայտորեն խորացնում է երկրի տեխնոլոգիական խզվածքը զարգացած երկրների համեմատությամբ և կարող է հանգեցնել հայրենական գիտական դպրոցների անդառնալի կորստին: Գիտական նոր կադրերի պատրաստմանն ու առկա գիտական ներուժն ընդլայնելուն ուղղված անհապաղ քայլեր չձեռնարկելու պարագայում վերջինս գտնվում է ժամանակի ընթացքում թուլացման (ընդհուպ մինչև՝ սպառման) վտանգի տակ՝ նույնիսկ երկրից դուրս չգալու դեպքում: Չարգացման համար հնարավոր վտանգ է կրթության, գիտության և ինովացիոն համակարգի դանդաղ զարգացումը՝ հաշվի առնելով հապաղելու դեպքում առավել շատ միջոցներ պահանջվելու անխուսափելիությունը: Տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների կիրառման տեմպերի թուլացումը կդատապարտի Հայաստանին դասվելու հետամնաց պետությունների շարքին: Հայաստանը կարող է կորցնել ներդրումներ ներգրավելու հնարավորությունը՝ հատկապես ուղղված տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության ոլորտների զարգացմանը:

*Գիտահետազոտական աշխատանքներով զբաղվող աշխատողների տեսակարար կշիռը տնտեսապես ակտիվ բնակչության մեջ 2005թ. կազմել է 0.2%, երբ ԵՄ միջինը 25 երկրներով՝ 0.8% է, իսկ 15 երկրներով՝ 0.9%: Ընդ որում, Հայաստանում գիտական աստիճանով բնակչության 64%-ը 50 տարեկանից բարձր են:*

*www.worldbank.org*

40. Էներգետիկ ճգնաժամ: Համաշխարհային զարգացումների համատեքստում վառելիքաէներգետիկ պաշարների ռազմավարական դերի բարձրացումը մեծացնում է հումքի արտաքին աղբյուրներից Հայաստանի կախվածության բացասական հետևանքների ազդեցությունը՝ դրանով իսկ վտանգելով սեփական շահերով թելադրված քաղաքականության վարումը: Առանց արտաքին աղբյուրներից էներգիայի նոր, հավասարազոր աղբյուրների ստեղծման ֆինանսավորման պայմանի (այդ թվում՝ գործող ատոմակայանի փակման համար), գործող ատոմակայանի փակումը Հայաստանի տնտեսության զարգացման համար առաջ կբերի չնախատեսված խոչընդոտներ: Երկրի համար հիմնախնդիրներ կառաջանան նորագույն տեխնոլոգիաներին դանդաղ անցման, ներմուծվող օրգանական վառելիքի թանկացման և էներգիայի վերականգնվող ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործման դեպքում: Գեռես ապահովված չէ էներգահամակարգի անվտանգ, հուսալի և կայուն աշխատանքը:

*Էլեկտրակայանների հզորությունների 38%-ը շահագործվել է ավելի քան 30 տարի, ՋԷԿ-երի հիմնական սարքավորումների աշխատաժամերը հասել են սահմանային 200 հազ. ժամի, իսկ դրանց տեխնիկատնտեսական և բնապահպանական ցուցանիշները չեն համապատասխանում միջազգային ստանդարտներին, ՀԷԿ-երի տեղակայված սարքավորումների 70%-ը շահագործվել է ավելի քան 30 տարի, իսկ 50% -ը՝ ավելի քան 40 տարի: Հետևաբար, ժամանակի հրատապ պահանջ են դարձել արտադրող հզորությունների սերնդափոխության և արդիականացման հետ կապված հարցերը:*

*ՀՀ տնտեսության զարգացման համատեքստում էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարությունը*

41. Տարածքային զարգացման և ժողովրդագրական վիճակի վատթարացում: Հայաստանի տարածքային զարգացման անհամաչափությունը սոցիալական, ժողովրդագրական անբարենպաստ պայմաններ են ստեղծում հատկապես կենտրոնից հեռացված, հարևան երկրների հետ հնարավոր ռազմական կոնֆլիկտների գոտում գտնվող և բնակլիմայական վատ պայմաններ ունեցող (բարձր լեռնային), բնակավայրերի համար՝ վտանգելով երկրի կենսունակության հիմքի գոյությունը: Գանդաղ, բայց որոշ առումով շարունակվող արտագաղթը, գյուղական բնակավայրերից համատարած հոսքը մեծ քաղաքներ, տարածքների զարգացվածության մակարդակների տարբերությունների շարունակաբար խորացումը կարող են հանգեցնել տնտեսական գերկենտրոնացման և անկայունության: Սոցիալ-տնտեսական վիճակով պայմանավորված աշխատուժի հոսունության արդյունքում տնտեսության

կառուցվածքը կարող է ձևախեղվել, և բարոյահոգեբանական մթնոլորտի հնարավոր վատթարացումը կարող է ճնշել գործարար հակումների դրսևորումը: Նշվածն առավել կարվի գյուղատնտեսության արդյունավետության բարձրացմամբ պայմանավորված «ավելցուկ գյուղացիական բնակչության» գործազրկության պայմաններում (այս երևույթի կանխումն անհրաժեշտ է դիտարկել տարածքներում տնտեսության նոր հատվածների ստեղծման համատեքստում): Հատուկ ուշադրություն է պահանջում բնակչության «ծերացման» երևույթը, որը տնտեսական և ժողովրդագրական լուրջ վտանգներ է պարունակում:

*2006թ. ընդհանուր բնակչության 64.1%-ը կենտրոնացված է քաղաքներում, որի 53.5%-ը՝ միայն Երևանում: Միգրացիայի մնացորդը թե՛ Երևանում և թե՛ մարզերում բացասական է, 2006թ. մշտական բնակչության նկատմամբ միգրացիայի մնացորդի միջին հանրապետական ցուցանիշը կազմել է 0.23%, Երևանում՝ 0.2%, մարզերում՝ 0.11-0.4%, միջին հանրապետական ցուցանիշից ցածր են միայն Արմավիրի (0.11%) և Կոտայքի (0.16%) մարզերը:*

*ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2006թ.*

42. Սոցիալական ճգնաժամ: Հանրապետությունում սոցիալական ապահովության համակարգի անարդյունավետ գործունեությունը հնարավորություն չի տալիս տնտեսական առաջընթացի արդյունքները լիարժեք ծառայեցնելու բնակչության, հատկապես՝ սոցիալապես խոցելի խավերի (նպաստառուներ, թոշակառուներ) կենսամակարդակի բարձրացմանը: Կենսաթոշակային, ընտանեկան և այլ նպաստների, ինչպես նաև ապահովագրության համակարգերում արմատական բարեփոխումների հապաղումը հղի է սոցիալական ճգնաժամով և ի չիք է դարձնում տնտեսական արդյունքները, քանզի սոցիալական և տնտեսական զարգացումների ոչ համահունչ ընթացքը ժամանակի մեջ կխորացնի բնակչության եկամուտների բևեռացվածությունը:

43. Չլուծված հակամարտություն, տարածաշրջանային մեկուսացման վտանգ: Հարևան երկրների հետ որոշակի պատմական, աշխարհաքաղաքական հիմնախնդիրների առկայությունը և հետագայում է՛լ ավելի սրվելու հնարավորությունը անմիջականորեն վտանգում են Հայաստանի սոցիալ-տնտեսական առաջընթացը: Ադրբեջանական Հանրապետության հետ հակամարտության հնարավոր վերսկսման, վերջինիս և Թուրքիայի կողմից Հայաստանի տարածաշրջանային մեկուսացմանն ուղղված ակնհայտ նպատակադրումները լրացուցիչ, լրջագույն մարտահրավերներ են ինչպես Հայաստանի տնտեսության, այնպես էլ՝ Հայաստանի Հանրապետության անվտանգության համար:

44. Վերլուծության արդյունքում նույնականացված երկարաժամկետ նախադրյալները տնտեսության զարգացման ռազմավարական հենակետերն են, որոնք նպաստում են երկրի առաջընթացի հնարավորությունների իրացմանը:

**ԳԼՈՒԽ 3. ՀՀ ԿԱՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ (ՄԻՋՈՑՆԵՐԸ)**

45. Վիճակի համակողմանի վերլուծության, հնարավորությունների հստակ գնահատման արդյունքում զարգացման իրատեսական միջոցների գործարկումն անհետաձգելի գերխնդիր է: Ընդ որում, Հայաստանի կայուն տնտեսական զարգացման հրամայականը դրված է այնպիսի ժամանակաշրջանում, երբ մի կողմից տնտեսական զարգացում ապահովելու ձգտումները հիմնավորված են լրջագույն նախադրյալներով, իսկ մյուս կողմից՝ երկիրը դեռևս խնդիրներ ունի կապված.

- նախորդ համակարգի իներցիայի հաղթահարման և անցումային վերափոխումներով պայմանավորված համապատասխան համակարգերի արմատավորման հետ,
- ռեսուրսների (բնական, մարդկային) արդյունավետ կառավարման և ստեղծված արդյունքների օպտիմալ բաշխման և վերաբաշխման հետ,
- համաշխարհային տնտեսության մեջ ինտեգրման խորացման և համաշխարհային շուկայում մրցունակ դիրքեր ապահովելու հետ,
- տնտեսական անվտանգության երաշխավորվածության ապահովման հետ:

46. Համաշխարհային տնտեսությանն առավելագույն ինտեգրման, միջազգային ասպարեզում արժանի տեղ ունենալու համար անհրաժեշտ է ապահովել տնտեսության բարձր մրցունակություն: Տնտեսության մրցունակության բարձրացման նպատակի իրականացումը պայմանավորված է այն հիմնական, ռազմավարական սկզբունքի ընկալմամբ, համաձայն որի մրցունակությունը ոչ թե ժառանգվում է, այլ ձեռք է բերվում ժամանակի հետ համընթաց: Այն չի ստեղծվում պարզապես բնական ռեսուրսների առկայության կամ որևէ տնտեսական ցուցանիշի փոփոխման արդյունքում:

***Տնտեսության մրցունակությունն արտահայտվում է արտահանման շուկայի ընդլայնմամբ և հիմնված է բարձր արտադրողականության, նորամուծության միջոցով ավելացված մեծ արժեքի ստեղծման վրա:***

47. Հայաստանի տնտեսության մրցունակության բարձրացման խնդիրը լուծելիս պետք է շեշտադրումը կատարվի հստակ ոլորտների և բնագավառների վրա: Այսինքն, այն առավելությունները, որոնց Հայաստանը կարող է հասնել միջազգային մակարդակով մրցակցելիս, առավելապես պետք է կենտրոնանան տնտեսության որոշակի

հատվածներում: Մրցունակության բարձրացման գործընթացում էականը պետության այն հատկություններն ու կարողություններն են, որոնք հնարավորություն կտան տնտեսավարող սուբյեկտներին որոշակի ոլորտներում ձեռք բերել և պահպանել մրցակցային առավելություններ:

48. Կարողությունների առանձնահատուկ կենտրոնացում են պահանջում ինչպես համեմատական առավելությունների առավելագույն իրացման (բնակլիմայական և պատմամշակութային առանձնահատկությունների, բնական և աշխատանքային ռեսուրսների ինտենսիվ օգտագործման վրա հիմնված), այնպես էլ՝ մշտապես մրցակցային առավելություններ ձևավորելու (նոր տեխնոլոգիաների ստեղծման, յուրացման և հարաճուն արտադրողականության ապահովման վրա հիմնված) ուղղություններով: Ընդ որում, համաշխարհային շուկայում համեմատական առավելությունների պատշաճ իրացումը մրցակցային առավելություններ ձևավորելու առումով լրացուցիչ ներդրումներ ներգրավելու հնարավորություն է տալիս: Հետագայում ակնհայտորեն կնկատվի նաև հակադարձ ներգործությունը՝ այդպիսով Հայաստանի մրցունակ ոլորտների համար ապահովելով պարբերական «սնուցումներ»:

***Տնտեսության մրցունակությունը կախված է իրական հատվածում արդիականացման և նորարարությունների ներդրման հնարավորությունից:***

49. Հետապնդելով գիտելիքահենք տնտեսություն ձևավորելու հեռանկարը՝ Հայաստանն առավելապես ընթանալու է գիտատար ճյուղերի առաջանցիկ զարգացման ճանապարհով, որի համար բնական ռեսուրսներն առավելություններ չեն ապահովում: Գեռ ավելին, հումքի կամ աշխատուժի զգալի պաշարների դեպքում դրանք, որպես կանոն, անարդյունավետ են օգտագործվում և հակառակը. դրանց պակասը ստիպում է մշտապես արդիականացնել արտադրությունը:

***Մրցունակ տնտեսություն ունենալու համար անհրաժեշտ է ապահովել այնպիսի ճյուղերի զերակշռություն, որտեղ արտադրության գործոնները բարձր որակավորում ունեցող կադրերն են և արտադրության հզոր գիտատեխնիկական հենքը, որոնք խոշոր ներդրումներ ներգրավելու և անընդհատ արդիականանալու հատկություն ունեն:***

50. Մրցունակության բարձրացման գործում գոյություն ունի նաև քաղաքական «խոչընդոտ»: Մրցունակության ձեռքբերման համար անհրաժեշտ ժամանակահատվածն ավելի երկար է, քան քաղաքական իշխանության կառավարման ժամանակը: Արդյունքների ստացման ցանկալի և հնարավոր պահերի տարամիտման դեպքում կատարվում են արագ արդյունքներ արձանագրող քայլեր՝

անտեսելով մրցունակության բարձրացման իրական պահանջները: **Հուլի կարևոր է որդեգրված քաղաքականության ժառանգականության սկզբունքի պահպանումը:**

51. Հայաստանի տնտեսության մրցունակության բարձրացման նպատակով համակարգված ծրագրային քաղաքականությունը պետք է իրականացնել՝ հաշվի առնելով նաև հետևյալ խնդիրները:

- Համեմատական առավելությունների առավելագույնս իրացում՝ գործընթացը դիտարկելով միջնորդային համագործակցության խորացման համատեքստում:
- Այն ոլորտների և ճյուղերի նույնականացում, որոնք բարձր որակավորմամբ կադրային ներուժի շնորհիվ ունակ են գիտատար արտադրանք թողարկել:
- Մրցակցային միջավայրի շարունակական բարելավում՝ չանտեսելով տեղական արտադրողների համար համեմատաբար առավել նպաստավոր, բայց ոչ երբեք հովանավորչական պայմանների ապահովման անհրաժեշտությունը:
- Ներմուծման քաղաքականության հստակեցում՝ կենտրոնանալով ներկրման կառուցվածքում տեխնոլոգիաների և սարքավորումների համար բարենպաստ ռեժիմ ապահովելու վրա:
- Ստրատեգիական և գիտականորեն հիմնավորված կառավարման համակարգերի, ստրատեգիական պլանավորման հմտությունների արմատավորում՝ տեղական մասնագետների ուսուցման, վերապատրաստման և օտարերկրյա մասնագետների ներգրավման միջոցով:
- Քաղաքական սահմանափակումների չեզոքացում և որդեգրված տնտեսական քաղաքականության ժառանգականության ապահովում:

52. Այսպիսով, հաշվի առնելով տնտեսության մրցունակության բարձրացման հիմնարար սկզբունքներն ու մոտեցումները, ինչպես նաև առկա խնդիրներն ու անելիքները, Հայաստանի կայուն տնտեսական զարգացման ապահովման միջոցները հիմնականում ամփոփվում են հետևյալ ուղղություններում՝

- գիտելիքահենք տնտեսության ձևավորում՝ հիմնված մարդկային կապիտալի առաջնահերթ զարգացման վրա,
- տնտեսությունում արտադրողականության և արդյունավետության շարունակական բարձրացում՝ ինովացիոն զարգացումներ ապահովելու միջոցով,
- արտահանման կողմնորոշմամբ տնտեսության կառուցում՝ նպատակադրվելով ապահովել ներմուծման նկատմամբ արտահանման առաջանցիկ աճ,
- ինստիտուցիոնալ զարգացումներ՝ համակարգված ինստիտուցիոնալ բարեփոխումները ծառայեցնելով կայուն տնտեսական զարգացման նպատակներին:

### 3.1 ԳԻՏԵԼԻԲԱԶԵՆՔ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

53. Երկիրը զարգացման տանելու, այսինքն աճին որակական բնույթ հաղորդելու որոշման իրագործումը ոչ այլ ինչ է, եթե ոչ հնարավոր այլընտրանքներից առավելագույն ինտենսիվ ուղին ընտրելը: Մարդկային, բնական և արտադրված ռեսուրսների միաժամանակյա օգտագործման պայմաններում անհրաժեշտ է գտնել դրանց շահագործման, պահպանման և աճի օպտիմալ հարաբերակցություն: **Բնական ռեսուրսների անվերականգնելիության կամ շարունակաբար նվազման ակնհայտությունը հանգեցնում է այն համոզմանը, որ վերականգնվող ու մարդկային ռեսուրսների ավելացման և/կամ բնական ռեսուրսների խնայման ճանապարհով կայուն զարգացումն այլընտրանք չունի՝ հարաբերականորեն քիչ ծախսերով ապահովելով մեծ արդյունք, ինչպես նաև սպառման բեռը բնական ռեսուրսների վրայից տեղափոխելով այլ միջոցների վրա:**

54. Այս իմաստով, անվերապահ առաջնայնություն է ձեռք բերում տնտեսության էվոլյուցիան՝ հիմնված մարդկային ռեսուրսների, այն է՝ մտավոր և ստեղծագործ ունակությունների առավել ինտենսիվ օգտագործման վրա: Նման զարգացումը պահանջում է ուշադրությունը կենտրոնացնել մարդկային կապիտալի զարգացման վրա՝ վերջինիս ուղղությամբ իրականացվող ներդրումները դիտելով որպես որակապես նոր տնտեսության կայացման նախապայման: Ներդրումները մարդկային կապիտալում հետագա սերունդներին թողնում են առավել մեծ ժառանգություն՝ գիտելիքի հարուստ հենքի, պահպանված շրջակա միջավայրի և արտադրության առավել կատարելագործված տեխնոլոգիաների տեսքով: Մարդկային կապիտալի զարգացման արդյունքում մրցակցությունն առավելապես հիմնվում է արդիական տեխնոլոգիաների ներդրման կարողությունների վրա, ինչն իր հերթին հանգեցնում է առանձին բնական ռեսուրսների ռազմավարական դերի նվազեցման և, միաժամանակ, նոր արժեք ստեղծելու մեջ մարդկային գործունի դերի մեծացմամբ տնտեսական առավել արդյունավետ գործունեության ծավալման: Տրամաբանորեն հանգում ենք մեկ և միակ եզրակացության:

***Տնտեսության մեջ որակական զարգացումներ կարող են ապահովվել գիտելիքահենք տնտեսություն կայացնելու ճանապարհով:***

55. Գիտելիքահենք տնտեսությանն անցման ուղին ընտրելը, բացի ռազմավարական նպատահարմարությունից և համաշխարհային գլոբալ գործընթացների միտումներից, Հայաստանի համար պայմանավորված է առանձնահատուկ արտաքին և ներքին գործոններով:

56. Գտնվելով էթնոքաղաքական և աշխարհաքաղաքական տեսանկյունից բավականին բարդ տարածաշրջանում, Հայաստանն ունի լրացուցիչ խոչընդոտների ազդեցության չեզոքացման գերխնդիր: Ակնհայտորեն, կապի և տրանսպորտային ուղիների սահմանափակությունը և կախվածությունը ստիպում են արտաքին առևտրում որդեգրել խիստ կշռադատված քաղաքականություն՝ կրիտիկական ներմուծման տեսականին հասցնելով նվազագույնի, իսկ արտահանման կառուցվածքում ապահովելով գիտատար և տեխնոլոգիատար ապրանքատեսակների առավելագույն ծավալ: Գիտատար արտադրանքը բավական բարձր է գնահատվում համաշխարհային շուկայում, իսկ դրա արտահանման հետ կապված ծախսերը հարաբերականորեն ցածր են:
57. Ներքին գործոնների առումով Հայաստանում առկա են գիտատեխնիկական զարգացման համար այնպիսի լրջագույն նախադրյալներ, ինչպիսիք են՝
- գիտության և կրթության նկատմամբ հակվածությունը,
  - ժառանգված գիտական ներուժը,
  - հայ անհատի՝ միայնակ գործով զբաղվելու և նմանների մեջ յուրահատկություն դրսևորելու ներքին հոգեբանական մղումը:
58. Ժառանգված գիտական ներուժը ձեռքբերովի նախադրյալ է, որն իր հերթին արդիականացման և շարունակաբար համալրման բազմաթիվ խնդիրներ ունի, սակայն համապատասխան պետական քաղաքականության կիրառմամբ կարող է որպես լիարժեք նախադրյալ ծառայել:
59. **Հայաստանի կայուն տնտեսական զարգացման առանցքային գործոնը գիտելիքահենք տնտեսության ձևավորումն է: Շեշտադրումը պետք է կատարվի մարդկային զարգացման վրա՝ կարողությունների բացահայտման և ավելացման, գիտական մտքի կիրառության խթանման և, վերջին հաշվով, գիտատեխնիկական արագաբայլ առաջընթացի միջոցով:**
60. Գիտելիքահենք տնտեսության նախապայմաններն են.
- արդիական, մրցունակ արդյունք թողարկող գիտակրթական և գիտահետազոտական համակարգերի արդյունավետ և ռացիոնալ գործարկումը,
  - գիտելիքահենք հասարակության ձևավորումը:
61. Ժամանակակից, մրցունակ գիտահետազոտական համակարգը ենթադրում է գիտելիքների փոխանցման ընդհանուր մեխանիզմի ստեղծում՝ ուղղորդված դեպի միջազգային գիտական-ինովացիոն գլոբալ համակարգերին ինտեգրմանը: Նման համագործակցությունն արտերկրում ստեղծված գիտական արժեքների ձեռքբերման, յուրացման և արդյունավետ կիրառման մեծ հնարավորություններ է ընձեռում:

Նմանատիպ զարգացումների հիմնական ռեսուրսը կրթության (այդ թվում՝ մասնագիտական), գիտության և բարձր տեխնոլոգիաների բնագավառի կադրային ներուժն է: **Կադրային ներուժի պահպանման և երիտասարդ կադրերի պատրաստման խնդիրներն առավել սուր են Հաստատանի տնտեսության համար:**

62. Կրթական համակարգի նպատակաուղղված արդիականացման, նախադպրոցական տարիքից սկսած շարունակական կրթության ապահովման ճկուն մեխանիզմների արմատավորման և միջազգային մակարդակով մրցունակ մասնագետներ պատրաստելու կարողությունն ուղղակիորեն կանխորոշում է գիտելիքահենք տնտեսության կայացումը: Մրցունակ մասնագետներ պատրաստելու նպատակը մեծապես կապվում է կրթական համակարգում մրցակցային սկզբունքների և մոտեցումների կիրառման հետ: Նախադպրոցական, դպրոցական և բուհական կրթական ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի մրցակցային դաշտում՝ այդ ծառայությունները ստացողին թողնելով առավել որակյալ ծառայություն ընտրելու իրավունքը, ինչն առաջնային պլան կնդիկրթության որակի ապահովման խնդիրը: Ընդ որում, բուհական կրթության որակի նկատմամբ պահանջարկը ձևավորվում է դեռևս նախադպրոցական և դպրոցական փուլից, ինչը պահանջում է միասնական գաղափարախոսության որդեգրում: **Այլ կերպ ասած՝ կրթական համակարգի արդիականացման և արդյունավետության բարձրացման խնդիրը հանգում է կրթական ծառայությունների առևտրայնացման անհրաժեշտությանը:**

63. Գործընթացի արդյունավետությունը չապահովելու դեպքում զարգացման այս կադապարը պարզապես անիրագործելի է: Ընդ որում, կրթության ոլորտում թերացումների ու ձախողումների շտկումը պահանջում է շատ երկար (տասնամյակներ) ժամանակ և միջոցներ՝ ժամանակաշրջանի մարտահրավերներին արժանավայել դիմակայելու հնարավորությունը հետաձգելով առնվազն մեկ սերունդ: Գիտելիքահենք տնտեսության ձևավորման գործում էական դեր կարող է խաղալ Հայաստանի մասնակցությունը Եվրոպական հետազոտական տարածքում և ԵՄ Համայնքային հետազոտությունների և զարգացման շրջանակային ծրագրերում, ինչպես նաև ԵՄ չափանիշներին և պրակտիկային կրթական և վերապատրաստման համակարգերի համապատասխանեցումը:

64. Գիտելիքահենք տնտեսություն ձևավորելու համար անհրաժեշտ է, որ քաղաքացու համար գիտությունը դառնա նրա առօրյան բարելավող գործոն: Այս տիպի տնտեսության կայացման նախադրյալներից մեկը սպառողի ինտելեկտուալ զարգացումն է: Սպառողական ապրանքների անվանացանկում պետք է ապահովել նորագույն գիտատար արտադրանքի առկայությունը: Նման գնումներ կատարելու

համար անհրաժեշտ է, որ սպառողի ինտելեկտուալ ներուժը մի քայլ առաջ լինի վերջինիս նյութական հնարավորություններից: Այստեղ կարևոր է, որ քաղաքացիները հասկանան և ընկալեն այս տնտեսության էությունը, ինչի գրավականը գիտությունից և գիտականորեն հիմնավորված լուծումներից օգտվելու արդյունավետության և շահավետության անընդհատ ցուցադրումը, ցուցանումն ու ապացուցումն է:

### 3.2 ԻՆՈՎԱՑԻՈՆ ՁԱՐԳԱՑՈՒՄ

65. Գիտելիքահենք տնտեսություն կայացնելու առանցքային սկզբունքը տնտեսության կողմից գիտության նկատմամբ պահանջարկի ձևավորումն է: Տնտեսական գործընթացների հետագա զլորալացումը և տեխնոլոգիաների արագ զարգացումը որոշ երկրների համար առանձնահատուկ նպաստավոր պայմաններ, իսկ մյուսների համար տնտեսական հետամնացության վտանգ են առաջացնում:
66. Ժամանակակից միջազգային մրցակցությունում ֆիրմաները հիմնականում մրցակցում են զլորալ ռազմավարության շրջանակներում և, բնականաբար, ոչ միայն աշխատանքային ռեսուրսների, այլ նաև օտարերկրյա կապիտալի ներգրավմամբ: Ներդրումային կապիտալը բազային արտադրանք և տեխնոլոգիական գործընթացներ ստեղծում և պահպանում է միայն «ընտրյալ» երկրներում: Այդպիսին որակվելու համար անհրաժեշտ է այնպիսի ճյուղերի զերակշռություն, որտեղ արտադրության գործոնները բարձր որակավորում ունեցող կադրերն են և արտադրության հզոր գիտատեխնիկական հենքը, որոնք խոշոր ներդրումներ ներգրավելու և անընդհատ արդիականանալու հատկություն ունեն:
67. Ժամանակակից զլորալացման պայմաններում, երբ կապիտալի հոսքերը աննախադեպ աճել են և մեծապես ուղղված են բարձր տեխնոլոգիաների ոլորտ, իսկ նորարարությունների ներմուծումը դարձել է շուկայական տնտեսության առանցքային գործոն, անհրաժեշտ է Հայաստանը գրավիչ դարձնել այդ հոսքերն ընդունելու առումով՝ առավելագույն կարճ ժամանակաշրջանում երկիրը դարձնելով եթե ոչ բարձր տեխնոլոգիաներ ստեղծող, ապա գոնե այն սպասարկող երկիր, որից հետո արդեն հիմք կլինի վերափոխվել ոլորտի առաջատարի:
68. Հայաստանի տնտեսության հրատապ խնդիրներից մեկը տեխնոլոգիական վերազինման միջոցով բարձր ավելացված արժեք ստեղծող գիտատար արտադրության ներուժի ընդլայնումն է: Տեխնոլոգիական վերազինում կարող է իրականացվել խոշոր օտարերկրյա ընկերություններից հայտնի տեխնոլոգիաների լիցենզիաների և «նոու-հաու»-ների ձեռքբերման կամ սեփական գիտատեխնիկական ներուժի օգտագործման ճանապարհով: Առաջին տարբերակով նորարարությունների

ներմուծումը համեմատաբար քիչ ռեսուրս է պահանջում, քան կծախսվեր դրանց ստեղծման վրա: Երկրորդն առավել հեռանկարային է, սակայն պահանջում է ֆինանսական և կազմակերպակառավարչական հստակ լուծումներ: Կախված առկա հնարավորություններից՝ արդյունավետ համատեղման, ինչպես նաև պետության, գործարար և գիտատեխնիկական հատվածների լիարժեք մասնակցության պարագայում կիրառելի են երկու տարբերակներն էլ միաժամանակ, ինչի համար անհրաժեշտ է.

- խթանել տնտեսության այն ոլորտները, որոնք գիտատեխնիկական արդյունքի կլանման ներուժ ունեն,
- ներդնել նորարարությունների առևտրայնացման գործուն և միջազգային մակարդակում ներկայացված ընդունելի և հասկանալի մեխանիզմներ:

69. Մեծ կարևորություն է ստանում գիտահետազոտական համակարգի և արտադրական հատվածի միջև գործնական կապի խորացումը՝ հիմնականում գիտական արդյունքների առևտրայնացման և համագործակցության մեխանիզմների արմատավորման միջոցով: Համագործակցության համար անհրաժեշտ է մի կողմից պետական աջակցություն ցուցաբերել գիտական հետազոտություններին, իսկ մյուս կողմից հնարավորություններ ստեղծել նորարարությունների կիրառման առումով: Պետական աջակցությամբ պետք է երիտասարդ բարձր մակարդակի կադրերին ներգրավել նոր գիտելիքների ստեղծման և ինովացիոն համակարգի ձևավորման գործընթացի մեջ, նպաստել առաջատար, աշխարհում արդեն ճանաչում ստացած հայ գիտական դպրոցների և կոլեկտիվների պահպանմանը, ինչպես նաև նրանց ինտեգրմանը համաշխարհային գիտական շրջանակներ: Գիտական աշխատանքների կիրառելիության ապահովումն իր հերթին կբարձրացի հետազոտությունների դերը:

70. Նորարարությունների ստեղծման և դրանց առևտրայնացման կարողությունը զարգացում երաշխավորող գլխավոր գործոններից է: Ինովացիոն գործունեության զարգացման հիմնական ուղղությունները, ինովացիոն քաղաքականության հիմնադրույթները և նրա իրականացման փուլերը որոշվում են տեխնոլոգիական վերազինման պահանջումներով և ներդրումային ռեսուրսների առկայությամբ:

71. Տնտեսության ինովացիոն զարգացումը պահանջում է ազգային ինովացիոն համակարգի հետևողական ձևավորում հետևյալ քայլերով.

- ինովացիոն զարգացման ծրագրային հենքի ապահովում և իրականացման հետևողական վերահսկում,
- օրենսդրական նպաստավոր հենքի ձևավորում և շարունակական կատարելագործում,

- ենթակառուցվածքային և ինստիտուցիոնալ հիմքերի ստեղծում,
- միջազգային ինովացիոն համագործակցության խթանում,
- վեճուրային կապիտալի ներգրավման գործուն մեխանիզմների արմատավորում,
- ինովացիոն կազմակերպությունների գործունեության խթանում և աջակցություն:

### 3.3 ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽԹԱՆՈՒՄ

72. Հայաստանի կայուն տնտեսական զարգացման ապահովման գործընթացում որոշիչ դերակատարում ունի արտահանման ուղղորդված քաղաքականության իրականացումը: Ներքին շուկայի խիստ սահմանափակությունը, ինչպես նաև համաշխարհային շուկա մուտք գործելն ու արտահանման ուղիների առանձնահատկությունը Հայաստանին թելադրում են իրականացնել հստակ արտահանման քաղաքականություն:
73. Արտահանման առաջանցիկ տեմպեր ապահովելու համար անհրաժեշտ է վարել արտահանման ուղղակի խրախուսման քաղաքականություն՝ հեռահար նպատակադրում ունենալով զարգացած երկրների շուկաներ ներթափանցելը: Երկրի մրցունակությունը դիտարկվում է որպես նրա արտահանող ընկերությունների միջազգային մրցունակության ազդեցիկ աղբյուր: Երկիրը մրցունակ է համարվում, եթե արտահանման կառուցվածքում գերակշռում են գիտատար, բարձր ավելացված արժեք ունեցող արդյունքները, և/կամ արտահանող ընկերություններն ունակ են պահպանել կամ ավելացնել իրենց մասնաբաժինը միջազգային շուկայում՝ երաշխավորելով երկրի արտահանման հարաբերական արժեքի կայուն աճ:
74. Շարունակաբար վարչարարության պարզեցում կատարելուց բացի, նախ և առաջ պետք է իրական շահագրգռվածություն առաջացնել արտահանման համար՝ չթողնելով դա միայն գործարարի համար տնտեսապես հեռատես լինելու օբյեկտիվ անհրաժեշտության վրա:
75. Ինստիտուցիոնալ բարեփոխումների շրջանակներում մեկընդմիջտ պետք է կարգավորվեն.
- արտահանման խթանման ժամանակակից գործիքների, ստանդարտների և դրանց գործունեությունն ու զարգացումն ապահովող համապատասխան ենթակառուցվածքների ներդրման խնդիրը,
  - ստանդարտացման, տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության հավաստման համակարգերի (ԵՄ-ի ներդաշնակեցված ոլորտներ) ԵՄ և միջազգային օրենսդրական ու վարչական գործելակերպին անցման խնդիրները,
  - արտահանման վարկավորման, ռիսկերի ապահովագրության խնդիրները,

- ավելացված արժեքի հարկի գծով գերավճարների վերադարձման ավտոմատացված համակարգի ներդրման խնդիրը,
- մաքսային վարչարարության պարզեցման, մաքսային ենթակառուցվածքների անխափան աշխատանքի ապահովման խնդիրը,
- արտահանման կողմնորոշում ունեցող ոլորտներին աջակցության արդյունավետ ծրագրերի իրականացման հարցը,
- արտաքին առևտրատնտեսական հարաբերությունների իրավապայմանագրային դաշտի կատարելագործման և արտահանողների համար առավել բարենպաստ առևտրային ռեժիմով ապահովելու խնդիրը:

76. Արտահանման ծավալների մեծացման և ծախսերի կրճատման առումով առանցքային կարևորություն է պահպանում տրանսպորտային հարցի լուծումը: Այդ նպատակով անհրաժեշտ է շեշտակիորեն ակտիվացնել տարածաշրջանային համագործակցությունն ու տարածաշրջանային ծրագրերի մեջ ընգրկման գործընթացը՝ հիմքեր ստեղծելով հետագայում տարանցիկ երկիր դառնալու՝ Հայաստանի հնարավորությունների իրացման համար:

77. Առանձնակի կարևորություն ունի մարքեթինգային համակարգի ստեղծումը: Այս գործառույթի արդյունավետ իրականացման համար պետք է նպաստել արտահանման համապատասխան մասնագիտացված կառույցների կայացմանը, որոնք կարող են արդյունավետ իրականացնել նաև քիչ քանակով և փոքրածավալ ապրանքներ արտահանողների համախմբման և միասնական արտահանման գործարքներ՝ այդպիսով էականորեն կրճատելով յուրաքանչյուր արտահանողի գործառնական ծախսերը:

78. Համաշխարհային շուկայում իրական մրցունակություն ապահովելու համար մեր արտահանող գործարարները պետք տիրապետեն գործող գների, ապրանքների և սպասարկման մակարդակի վերաբերյալ օպերատիվ և հավաստի տեղեկատվության՝ ռազմավարական և մարտավարական քայլերը պլանավորելով առավելապես դրա հիման վրա: Մարքեթինգի և կառավարման գիտելիքների և հմտությունների պակասը կրկնապատկում է տեղական արտադրողների տնտեսական ռիսկերը՝ նրանց մեծ կախման մեջ պահելով մակրոտնտեսական իրավիճակից: Սա լրացուցիչ անգամ հիմնավորում է համապատասխան գիտելիքների պաշարի և միջազգային փորձի կիրառմամբ արդյունավետ գործունեություն ծավալելու նպատակահարմարությունը:

79. Արտահանման լուրջ սահմանափակում է տեղական համապատասխանելիության սերտիֆիկատների ընդունված չլինելու հանգամանքը օտարերկրյա շատ երկրներում:

Անհրաժեշտ է արագացնել որակի կառավարման համակարգի արդիականացման և եվրոպական չափանիշների հետ ներդաշնակեցման գործընթացները:

- 80. Արտահանման աճին կարող է նպաստել նաև անդրազգային ընկերությունների ներգրավումը մեր տնտեսության մեջ: Նրանց ֆինանսական մեծ հնարավորությունները և առևտրատնտեսական լայն կապերը դրականորեն կանդրադառնան Հայաստանի արտահանման կարողությունների ընդլայնման վրա:
- 81. Վերոնշյալ բոլոր ուղղություններով միջոցառումների իրականացման ընթացքում շեշտադրման առանցքը պետք է լինի հատկապես գիտատար և տեխնոլոգիատար արտադրության արդյունքների արտադրության և արտահանման խրախուսումը:

### **3.3 ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐ**

- 82. Ինստիտուցիոնալ համակարգը մեծապես ազդում է տնտեսական գործընթացների վրա՝ տնտեսական փոխհարաբերությունների արդյունավետության բարձրացման և տնտեսությունում գործառնական ծախսերի կրճատման առումով: Տնտեսական զարգացման ինստիտուցիոնալ մոտեցումների նշանակությունը հատկապես ակնհայտ է զարգացող տնտեսություններում, քանի որ տնտեսական մեխանիզմների հիմքերն այնտեղ լիարժեք կայացած չեն:
- 83. Հանդգլած լինելով, որ տնտեսական աճն ինքնին չի երաշխավորում տնտեսական զարգացման բավարար մակարդակ և կարևորելով տնտեսական զարգացման մեջ ինստիտուցիոնալ գործոնների դերը՝ Հայաստանում ինստիտուցիոնալ բարեփոխումների վերջին փուլի իրականացման անհրաժեշտությունը դառնում է օրվա հրամայական:
- 84. Հայաստանում շուկայական հարաբերություններին անցումից հետո ներմուծվեցին շուկայական տնտեսակարգի շատ տարրեր, սակայն խաղի նոր կանոնների (ֆորմալ ինստիտուտներ) կիրարկումը հաճախ սահմանափակվեց հին, ոչ ֆորմալ ինստիտուտների առկայությամբ (ուժեղ բյուրոկրատիա, օրենքի նկատմամբ անվստահություն, ավանդույթներ և այլ գործոններ): Ինստիտուտներն անընդհատ փոխակերպվում են, որտեղ ֆորմալ ինստիտուտները փոփոխվում են համեմատաբար արագ, քան ոչ ֆորմալները, քանի որ ֆորմալ ինստիտուտները ստեղծում են հարաբերությունների արտաքին միջավայրը, իսկ մարդկանց գիտակցության մեջ պատմականորեն արմատավորված ոչ ֆորմալ ինստիտուտները, ներկայացնելով ինստիտուցիոնալ համակարգի միջուկը, միանգամից չեն կարող վերափոխվել: Ազատական արժեքների վրա հիմնված տնտեսությանն անցնելիս շուկայական ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտները հաճախ ներմուծվեցին միմյանցից տարանջատված, որի

հետևանքով ստեղծված որոշակի ինստիտուտներ չկարողացան իրականացնել իրենց առաքելությունները: Սոցիալ-տնտեսական զարգացումը որոշակիորեն զսպվեց անհրաժեշտ ինստիտուցիոնալ կառույցների բացակայության պատճառով (ապահովագրական, վարկային և երաշխիքային համակարգեր, ներդրումային հիմնադրամներ և այլն): Ինստիտուտների աններդաշնակ ներմուծման հետևանք եղավ նաև օրենքների կիրարկման ցածր մակարդակը: Այսինքն, ինստիտուցիոնալ քաղաքականության առկա բացթողումները պայմանավորվեցին օրենսդրական բարեփոխումների ընթացքում չտեղայնացված (այսինքն, տեղի, ժամանակի և ընկալման հետ ոչ ներդաշնակ) օտարերկրյա իրավական մոդելների օգտագործմամբ և ինստիտուցիոնալ կառույցների ներմուծման ժամանակավրեպությամբ: Այստեղ խնդիրը ոչ միայն օրենսդրական դաշտի կայացման ու հասարակության իրավական իրազեկվածության ապահովմանն է առնչվում, այլ նախևառաջ համապատասխան ինստիտուտների, այսինքն իրավական կանոնների և դրանց իրացումն ապահովող մեխանիզմների՝ հասարակական պրակտիկայով ամրապնդման կարևորությունը: Այսինքն, անցում կատարելով տնտեսական մի համակարգից մեկ այլը՝ մեր տնտեսության սուբյեկտների մոտ բազմաթիվ հիմնարար սկզբունքներ և նորմեր դեռևս սովորույթի կամ ավանդույթի կարգավիճակ չեն հասցրել ստանալ: Սա անհրաժեշտ է նկատի ունենալ զարգացման քաղաքականություն իրականացնելիս: Ընդ որում, ինստիտուտների անցնցում ներմուծման համար պատասխանատու են միաժամանակ պետությունը և քաղաքացիական հասարակության ինստիտուտները՝ նախևառաջ համապատասխան գաղափարախոսական հենք ձևավորելու միջոցով:

85. Քաղաքացիական հասարակության ինստիտուտները (ասոցիացիաներ, միություններ, միավորումներ, պալատներ, շահերի խմբեր) նոր արդյունք չեն ձևավորում, բայց ակտիվորեն մասնակցում են երկրի սոցիալ-տնտեսական կարգավորմանը: Պետական գործառույթների ապակենտրոնացման դեպքերում նպատակը ոչ թե այդ գործառույթները շուկայական ինքնակարգավորմանը թողնելն է, այլ դրանք փոխանցելը քաղաքացիական հասարակության ինստիտուտներին, որոնք էլ դառնում են կարգավորման մեխանիզմների տարրեր:

86. Տնտեսության ինստիտուցիոնալ զարգացման գործընթացում անհրաժեշտ է մշտապես հաշվի առնել պատմամշակութային ավանդույթներով պայմանավորված վարքագծային առանձնահատկությունները: Դրանք, որպես սոցիալական համակարգի կառուցվածքի և սկզբունքների վերարտադրության ապահովման մեխանիզմ, հասարակության սոցիալական, մշակութային արժեքները կապում են տնտեսական մեխանիզմների հետ: Սա նշանակում է, որ պետության՝ միայն իրեն

հատուկ ինստիտուցիոնալ կառուցվածքն է ի վիճակի դրականորեն ազդել տնտեսական զարգացման գործընթացների վրա<sup>2</sup>:

87. Պետության ինստիտուցիոնալ կառուցվածքը մշտապես կրում է նաև քաղաքական սահմանափակումների ազդեցությունը: Քաղաքական կայունություն, իրավունքի գերակայություն, իրավունքների պաշտպանվածություն և արդարադատություն, կոռուպցիա և ստվերային շրջանառություն. սրանք այն երևույթներն են, որոնց անընդունելի մակարդակները կարող են զսպել առաջընթացն ու որակական փոխակերպումները:

88. Այսպիսով, նոր ինստիտուտների ներմուծման գործընթացներում անհրաժեշտ է նկատի ունենալ.

- ազգային պատմամշակութային ավանդույթներով պայմանավորված վարքագծային առանձնահատկությունները,
- ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտների ներմուծման ներդաշնակության ապահովման անհրաժեշտությունը,
- քաղաքացիական հասարակության ինստիտուտների՝ տնտեսական որոշումների կայացման գործընթացում անմիջական և լիարժեք մասնակցության ապահովման, դրանց համար համապատասխան գաղափարախոսության առկայության անհրաժեշտությունը,
- ինստիտուցիոնալ զարգացման քաղաքական սահմանափակումների հնարավորինս վերացման ուղղությամբ հետևողական և շարունակական քաղաքականություն իրականացնելու անհրաժեշտությունը:

89. Առաջնորդվելով այս սկզբունքներով՝ Հայաստանում անհրաժեշտ է վարել ակտիվ ինստիտուցիոնալ քաղաքականություն, ինչը կայանում է իրավական դաշտի կատարելագործման և ինստիտուցիոնալ կառույցների (ենթակառուցվածքների) լիարժեք ձևավորման ուղղություններով հետևողական քայլերի անհապաղ իրականացման մեջ:

90. Ազատական, բարենպաստ գործարար և ներդրումային միջավայր ապահովելով հանդերձ՝ գործող իրավական դաշտը բարեփոխումների կարիք ունի՝ այն զարգացմանը ծառայեցնելու և զուգահեռաբար եվրոպական չափանիշներին առավել ներդաշնակեցնելու տեսանկյունից: Իրավական դաշտի բարենպաստության գլխավոր երաշխիքը դրա կանխատեսելիության, լիարժեքության և ներդաշնակության

<sup>2</sup> Անհատականության և մրցակցային պրագմատիզմի վրա հիմնված անգր-սաքսոնական վարքագծային առանձնահատկությունն անդրադարձել է ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի ազատական տնտեսական համակարգերում: Փոխադարձ վստահության, հարգանքի ու պատասխանատվության խոր գիտակցման վառ արտահայտվածությամբ է ձևավորվել ասիական մի շարք տնտեսությունների կառավարման խիստ ինքնատիպ համակարգը: Հայկական վարքագիծը, իր ձևի մեջ լինելով խիստ ինքնատիպ, պարունակում է վառ անհատականության, նորի նկատմամբ ընկալունակության և կառուցողական հարմարվողականության դրսևորումներ:

ապահովման մեջ է: Այս իմաստով անհրաժեշտ է, որպեսզի օրինաստեղծ գործընթացներն ընթանան բացառապես համապարփակ հայեցակարգային գաղափարախոսության շրջանակներում:

91. Տնտեսական զարգացման քաղաքականության տեսանկյունից հրատապ է օրենսդրության որակական բարեփոխման հարցը: Կանոնակարգման առանցքը պետք է դառնա գործունեության համար հավասար, լայն հնարավորությունների տրամադրումը և միաժամանակ հնարավոր իրավախախտման կանխարգելումը: Ռեսուրսների կենտրոնացումը միայն հսկողության և վերահսկողության ուղղությամբ, ինչպես նաև լրացուցիչ բյուջետային մուտքերի ակնկալումը իրավախախտման դիմաց պատասխանատվության կիրառման միջոցով անարդյունավետ գործելակերպ է:
92. Օրենսդրական դաշտի ձևավորման գործընթացում հավասարապես պետք է ներկայացված լինեն գործարարների, հանրության և պետության շահերը՝ ապահովելով պատասխանատվության հստակեցման, հակադիր շահերի ապակենտրոնացման և տարանջատման սկզբունքները: Սա ենթադրում է հանրապետությունում շահերի խմբերի, լոբբիստական կազմակերպությունների, մասնագիտացված միությունների գործունեության խթանման և հասարակության իրավագիտակցության բարձրացման ապահովում:
93. Տնտեսության զարգացմանը նպատակաուղղված իրավական կարգավորման առաջնահերթ քայլերը պետք է ուղղորդվեն.
  - մտավոր սեփականության օբյեկտների իրավական պահպանության մակարդակի բարձրացման ապահովմանը,
  - տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականության արդյունավետության բարձրացմանը և այն միջազգային չափանիշներին մոտեցման ապահովմանը, ներքին շուկայի պաշտպանությանը,
  - ինովացիոն գործունեության աշխուժացման ապահովմանը, տեխնոլոգիական արդիականացման գործընթացներին նպաստմանը, հավասար և գրավիչ ներդրումային պայմանների ապահովմանը,
  - կորպորատիվ կառավարման համակարգի արդյունավետ գործարկմանը, բաժնետերերի և ներդրողների շահերի պաշտպանությանը, արժեթղթերի շուկայի կայացմանը, ապահովագրական գործունեություն իրականացնողների միջև ազատ մրցակցության ապահովմանը,
  - արտադրանքի, աշխատանքների և ծառայությունների անվտանգության ապահովմանը, առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացմանը:

94. Ինստիտուցիոնալ կառույցների ու ենթակառուցվածքների ձևավորման և արդյունավետության բարձրացման առումով համակարգված, կառուցողական մոտեցումներ պետք է ցուցաբերվեն հիմնականում հետևյալ ուղղություններով.

- Տնտեսավարող սուբյեկտների (այդ թվում՝ ՓՄՁ սուբյեկտների) արտաքին ֆինանսավորման մատչելիության բարձրացում՝ ֆինանսական շուկաների զարգացման խթանման, վարկային (այդ թվում՝ լիզինգային, հիպոթեքային) ճկուն ծրագրերի ներդրման միջոցով: Խնդրի լուծումը պահանջում է նաև հանրապետությունում անշարժ և շարժական գույքի շուկաների աշխուժացմանն ուղղված ինստիտուցիոնալ միջոցառումներ:
- Սեփականության իրավունքների պաշտպանության, պայմանագրային պարտավորությունների կատարման մակարդակի բարձրացում՝ դատական համակարգի արդյունավետության բարձրացման և վեճերի լուծման այլընտրանքային եղանակների (այդ թվում՝ երրորդային դատարան) արմատավորման միջոցով: Գործարար միջավայրում ֆինանսական կարգապահության ու փոխադարձ վստահության մակարդակների աճը մասնավոր սեկտորի հետագա զարգացման էական խթաններ են:
- Արտաքին առևտրի ոլորտում որդեգրված ազատական քաղաքականության հետևողական խորացում՝ կենտրոնանալով հատկապես հարկային և մաքսային վարչարարության կատարելագործման ուղղություններով: Արտահանման խթանման տեսանկյունից անհրաժեշտ է էականորեն աշխուժացնել արտահանման վարկավորման, ապահովագրության և երաշխիքների տրամադրման գործուն մեխանիզմների արմատավորումը:
- Տրանսպորտային, կապի և հեռահաղորդակցության համակարգերի վիճակի առաջնահերթ բարելավում: Ճանապարհների և ճանապարհային ենթակառուցվածքների, հեռահաղորդակցության որակի ու մատչելիության բարձրացում, հանրապետությունում դիվերսիֆիկացված, այլընտրանքային որակյալ կապուղիներով ապահովելու միջոցով, որտեղ ակտիվ ներդրումային քաղաքականության իրականացման կարիք կա:
- Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման դաշտի ընդլայնում՝ տնտեսության բոլոր ճյուղերում դրանց ներդրման նպաստման և էլեկտրոնային կառավարման գործելակերպի արմատավորման միջոցով՝ ոլորտում ազատական քաղաքականության իրականացման հետ միաժամանակ ուշադրության կենտրոնում պահելով անվտանգության ապահովման խնդիրները:

- Ֆինանսական, հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության հստակեցում՝ վերլուծությունների, ուսումնասիրությունների և կանխատեսումների գործընթացները կազմակերպելով առավելապես գիտական պլանավորման և փորձագիտական մակարդակով:
- Պետական կառավարման համակարգում սկսված բարեփոխումներն իրականացնել բացառապես որակական փոփոխությունների միջոցով՝ ապահովելով պետական ծառայության արդյունավետության և մրցունակության բարձրացումը, բյուջետային հատկացումների տեղադրային (ազատ մրցակցային) և ծրագրային հիմնավորվածության հիմունքներով բաշխման արդյունավետությունը և թափանցիկությունը:
- Տնտեսության մեջ պետության միջամտության օպտիմալ մակարդակի ապահովում՝ պետության առկայությունը շուկայում կայացնելով գործընկերային հարթությունում, շարունակաբար իրականացնելով հարկային վարչարարության էական պարզեցման (ինքնազնահատման համակարգի ներդրում, հարկատուների սպասարկման մակարդակի էական բարձրացում, էլեկտրոնային կառավարման արմատավորում), ինչպես նաև կազմակերպություններում ստուգումների իրականացման կուռ համակարգի արմատավորման քաղաքականություն:

#### **ԳԼՈՒԽ 4. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՄԱՉԱՓ ՁԱՐԳԱՑՈՒՄ**

95. Երկրի կայուն տնտեսական զարգացման տեսանկյունից կարևորագույն խնդիր է հանրապետության ողջ տարածքում տնտեսության համաչափ ու համամասնորեն զարգացման ապահովումը: Տնտեսական աճի անհամաչափ բաշխման արդյունքում տարածքների զարգացման տեսանկյունից Հայաստանում առաջացել են հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրներ: Տարածքային համաչափ զարգացումը կարևորվում է նաև ազգաբնակչության (անկախ բնակության վայրից) սոցիալ-մշակութային հավասար հնարավորությունների ապահովմամբ: Հանրային կյանքի բարձր որակ և տարածքների բարգավաճում ապահովելը հանրապետության տնտեսական զարգացման համատեքստում առանցքային խնդիրներ են:
96. Հայաստանի կայուն տնտեսական զարգացման երկարաժամկետ ռազմավարության արդյունավետ իրագործման նախադրյալներից մեկը տարածքային տնտեսական զարգացման առանձնահատկությունների և գերակայությունների նույնականացումն է և արդյունքում տարածքների զարգացման համաչափության ապահովումը: Ընդ որում, տնտեսապես ցածր մակարդակ ունեցող տարածքների զարգացումը չպետք է

լինի համեմատաբար բարձր մակարդակ ունեցող տարածքների հաշվին: Անհրաժեշտ է ապահովել այնպիսի իրավիճակ, երբ մայրաքաղաքը կդառնա առավելապես «վարչական-ներկայացուցչական» կենտրոն՝ տարաբնույթ բարիքների ստեղծման միանձնյա դերակատարությունը կիսելով տարածքների հետ: Այսինքն սոցիալական, կրթական, գործարար, գեղագիտական, ֆիզիկական և անձի լիարժեք ինքնադրսևորման համար անհրաժեշտ այլ պահանջմունքների բավարարումը չպետք է վտանգվի պարզապես կենտրոնից աշխարհագրական առումով հեռացված լինելու փաստով:

97. **Կայուն տնտեսական զարգացման ռազմավարության տարածքային տնտեսական զարգացման բաղադրիչն իրենից ներկայացնում է փոխկապակցված սկզբունքների, խնդիրների և մեխանիզմների ամբողջական համակարգ, որի իրականացումը Հայաստանի տարածքներին թույլ կտա դուրս գալու ճգնաժամային վիճակից, կնպաստի նրանց տնտեսական, սոցիալական համաչափ զարգացմանը:**
98. Տարածքային տնտեսական զարգացման հիմնաքարը պետք է հանդիսանա այդ տարածքներում տնտեսավարող սուբյեկտների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և ողջ հանրության միասնական գործելու կարողությունը, ինչը հնարավորություն կտա տարածքների առանձնահատկությունների և առկա ներուժի առավելագույն իրացմամբ գտնել տնտեսության զարգացման առավել օպտիմալ ուղիներ:
99. Տարածքային տնտեսական զարգացման հիմնական նպատակն է՝ ***Հայաստանի տարածքների մրցունակության բարձրացումն ու տարածքներում գործարար ակտիվության բարձրացումը, ինչի արդյունքում, հասարակական, գործարար և կառավարման շրջանակների ջանքերի համախմբման ճանապարհով, հնարավոր է հասնել տարածքներում ազգաբնակչության կյանքի որակի (բարեկեցության) բարձրացմանը:***
100. Առանց բնակավայր առ բնակավայր, մարզ առ մարզ մրցունակության բարձրացման հիմնախնդրի լուծման անհնար է պատկերացնել ամբողջությամբ վերցրած երկրի մրցունակության և բնակչության ընդհանուր կենսամակարդակի բարձրացումը:
101. Տարածքային մրցունակությունը հնարավոր է ապահովել միայն որոշակի և նպատակալից, տարածքային ձեռնարկատիրության մրցունակությանը նպաստող գործողություններով՝ զարգացման համար գրավիչ պայմանների ստեղծման միջոցով:

102. Տարածքային մրցունակության բարձրացման համար կարևորագույն խնդիր է այդ տարածքներում տնտեսության մրցունակ հատվածների ձևավորումը: Մրցունակ տարածքներ ունենալու համար անհրաժեշտ է տարածքներում տնտեսության այնպիսի ճյուղերի առկայություն, որտեղ ստեղծվում է բարձր ավելացված արժեք, և առկա է արտահանման ներուժ: Մասնավորապես, հանրապետության տարածքները մրցունակության բարձրացման որոշակի ներուժ ունեն` նկատի ունենալով գյուղատնտեսությունը և դրա հիմքի վրա գյուղատնտեսական հումքի վերամշակման ճյուղերը, զբոսաշրջությունը, հանքարդյունաբերությունը, թեթև արդյունաբերությունը, ակնագործությունը, արհեստագործությունը և այլն: Տարածքային մրցունակության բարձրացման գործընթացը ենթադրում է նաև միջտարածքային արդյունավետ համագործակցություն:
103. Տարածքների մրցունակության բարձրացման ընթացքում կարևորագույն տեղ պետք է հատկացվի բնապահպանական վիճակի բարելավման, շրջակա միջավայրի աղտոտվածության նվազեցման, բնական և ռեկրեացիոն ռեսուրսների արդյունավետ օգտագործման ապահովման և տարաբնակեցման խնդիրներին, ինչը կնպաստի տարածքներում առողջ ու անվտանգ կենսամիջավայրի ստեղծմանը, ինչպես նաև հետագա սերունդների համար տվյալ տարածաշրջանում բնակվելու բարենպաստ պայմանների ապահովմանը:
104. Տարածքային մրցունակության բարձրացման մեխանիզմները արտահայտվում են հետևյալ ուղղություններով.
- Տարածքային կլաստերների և միավորման այլ ձևերի ձևավորում և զարգացում` հաշվի առնելով տվյալ տարածքի ճյուղային մասնագիտացումը: Այս դեպքում շեշտը պետք է դրվի այն հանգամանքի վրա, որ ինչպես կլաստերաստեղծ ձեռնարկությունը, այնպես էլ կլաստերի մյուս բաղադրիչները պետք է առավելագույնս կենտրոնացած լինեն այդ տարածաշրջանում:
  - Ճյուղային կլաստերների և միավորման այլ ձևերի ձևավորում և զարգացում, որի դեպքում կլաստերները և միավորման այլ ձևերը չեն սահմանափակվի մեկ տարածաշրջանի սահմաններում: Կլաստերաստեղծ ձեռնարկությունը և կլաստերի մյուս բաղադրիչները սփռված կլինեն հանրապետության ողջ տարածքով, ինչն էլ կապահովի հանրապետության տարածքների միջև արդյունավետ համագործակցությունը:
  - Տարածքներում ինովացիոն համակարգերի ձևավորում, ինովացիոն ենթակառույցների ստեղծում (մասնավորապես տեխնոպարկեր, բիզնես ինկուբատորներ և արդյունաբերական պարկեր): Առաջնահերթությունը կտրվի

այն տարածաշրջաններին, որոնք ունեն տնտեսական և գիտատեխնիկական ներուժ կամ արդյունաբերական ավանդույթներ:

- Բարձր հավելյալ արժեք ստեղծող, գիտելիքահենք և արտահանման ուղղվածություն ունեցող հատվածների ստեղծմանն ու հզորությունների ընդլայնմանն աջակցություն, մասնավորապես՝ կադրերի պատրաստում և վերապատրաստում, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ուղղակի և անուղղակի ֆինանսական և այլ միջոցների տեսքով աջակցության տրամադրում (դրամաշնորհներ, տեխնոլոգիաներ, շինություններ, տարածքներ և այլն), ներդրումային նախագծերի իրականացում (նպատակային ծրագրերի նախագծերի փաթեթների պատրաստում, ինչը հնարավորություն կտա խուսափել անհարկի վարչարարությունից և կխթանի ձեռնարկատիրական գործունեությունը) և այլն:
- Ջրուսաշրջության զարգացում՝ տարածքներում զբոսաշրջության տեղեկատվական կենտրոնների ցանցի ստեղծման, ենթակառուցվածքների և սպասարկման ցանցի զարգացման, զբոսաշրջային գործունեության աջակցության ընդլայնման միջոցով:
- Տարածքներում ոչ գյուղատնտեսական աշխատատեղերի ստեղծում և ինքնազբաղվածության մակարդակի բարձրացում, որի համար խթան կհանդիսանա արհեստագործության և ծառայությունների ոլորտի զարգացման աջակցությունը, մասնավորապես, տարածքներում արհեստագործական գործունեության զարգացմանն աջակցությամբ, կրթական ծառայությունների որակի բարձրացմամբ, մշակութային օջախների վերականգնմամբ, առողջապահական մատչելի ու որակյալ ծառայությունների ապահովմամբ, երիտասարդության հիմնախնդիրների լուծմամբ, կոմունալ և կենցաղային որակյալ ծառայությունների ապահովմամբ և այլն:
- Գյուղատնտեսությունում արդյունավետության բարձրացում և զարգացում՝ գյուղատնտեսական արտադրության ենթակառուցվածքների ստեղծման, գոտիական մասնագիտացման և արտադրության ռացիոնալ տեղաբաշխման, ինչպես նաև տեղական գյուղատնտեսական հումքի բազայի հիման վրա գործող վերամշակող արդյունաբերության զարգացմանն աջակցության ընդլայնման միջոցով:
- Համայնքների օպտիմալացում, միջհամայնքային համագործակցության մեխանիզմների կատարելագործման և ուժեղացման, վարչատարածքային օպտիմալ կառուցվածքի ձևավորման միջոցով, որը կնպաստի

վարչատարածքային բաժանման բացասական հետևանքների վերացմանը և հիմքեր կստեղծի համայնքների սահմաններում սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման արդյունավետության բարձրացման և համայնքի հետագա տնտեսական զարգացման համար:

- Հանրապետության տարածքների բնական ու ռեկրեացիոն ռեսուրսների արդյունավետ օգտագործում, ինչը կապահովի առողջ և անվտանգ կենսամիջավայր, բնապահպանական հավասարակշռություն և կնպաստի տարածքներում բազմաճյուղ տնտեսության զարգացմանը, ինչպես նաև հետագա սերունդների՝ տվյալ տարածաշրջանում բնակվելու բարենպաստ պայմանների ապահովմանը:
- Տարածքային պլանավորման փոխհամաձայնեցված սկզբունքների պահպանում և քաղաքաշինական ծրագրային հատակագծման փաստաթղթերի բազայի ձևավորում, որոնց բացակայության պայմաններում կարող են վտանգվել տարածքների և բնակավայրերի ներդաշնակ զարգացման հեռանկարները:

105. Տեղական մակարդակում գործարար միջավայրի բարելավման տեսանկյունից կարևորագույն տեղ են զբաղեցնում տնտեսության կառավարման համակարգի կատարելագործման, տեղական ինքնակառավարման համակարգի լիարժեք կայացման, ինչպես նաև նրանց և տարածքային կառավարման մարմինների արդյունավետ համագործակցության հստակեցման, գործունեության թափանցիկության ապահովման, ենթակառուցվածքների գործունեության բարելավման խնդիրները:

106. Վճռականություն պետք է ցուցաբերել տարածքներում նոր ինստիտուտների ներմուծման և ինստիտուցիոնալ ենթակառուցվածքների ձևավորման գործընթացի առնչությամբ: Ենթակառուցվածքները տարածքներում պետք է ստեղծվեն սոցիալ-տնտեսական նպատակահարմարությամբ՝ ելնելով տվյալ տարածքի կրթական, սոցիալական, մշակութային, ժողովրդագրական և այլ նախապայմանների առկայությունից:

107. Տարածքներում գործարար միջավայրի բարելավմանը պետք է հասնել հետևյալ մեխանիզմների միջոցով:

- Տարածքներում փոքր և միջին ձեռնարկատիրության խթանում և զարգացում՝ ռեսուրսները կենտրոնացնելով հատկապես սկսնակ ձեռնարկատերերին աջակցության ընդլայնման ուղղությամբ:
- Տարածքներում ձեռնարկատիրական գործունեության կառավարման մակարդակի բարձրացում՝ ձեռներեցությանն աջակցող կառույցների դերի

բարձրացմամբ (առևտրաարդյունաբերական պալատներ, բիզնես կենտրոններ, խորհրդատվական և տեղեկատվական ծառայություն մատուցողներ և այլն):

- Տարածքային տարբերակված քաղաքականության իրականացում (հարկային, ֆինանսավարկային և այլ)՝ ելնելով տարածքների զարգացվածության մակարդակներից և զարգացման ներուժից:
- Շուկայական ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում, բանկային համակարգի ցանցի ընդլայնում, ապահովագրական համակարգի ներդրում և ֆինանսական այլ կառույցների ստեղծում ու զարգացում, ինչը հնարավորություններ կստեղծի տարածքներում ձեռարկատիրական գործունեության համար ֆինանսական միջոցների մատչելիության բարձրացման:
- Ներդրումների համար բարենպաստ միջավայրի ստեղծում, տարածքներում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող ձեռնարկատիրությանն աջակցության ընդլայնում:
- Տարածքներում պետական քաղաքականության արդյունավետ իրականացման համար իրավական և ինստիտուցիոնալ հենքի կատարելագործում:

108. Տարածքների մրցունակության բարձրացմանն ու տարածքներում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը, մարդկային կապիտալի, բնական ու մշակութային ժառանգության պահպանումը կնպաստեն տարածքների գրավչության (այնտեղ բնակվելու, ներդրումներ կատարելու և զբոսաշրջության տեսանկյունից) բարձրացմանը, ինչի արդյունքը կլինի ոչ միայն տարածքների տնտեսական, այլ նաև մարդկային զարգացումը, հավասարակշռված բնապահպանական վիճակը, ինչն էլ հիմք կհանդիսանա երկրի կայուն և համաչափ տնտեսական զարգացման համար՝ ապահովելով բնակչության բարեկեցության շարունակական բարձրացում և համահավասար կենսամակարդակ հանրապետության ողջ տարածքում:

**ԳԼՈՒԽ 5. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ**

109. Տնտեսական անվտանգությունը տնտեսական և քաղաքական ինստիտուտների այնպիսի իրավիճակ է, որն ապահովում է ազգային տնտեսության ազատ և առավել ճկուն գործելակերպը, ներքին և/կամ արտաքին անբարենպաստ պայմաններում հնարավոր վտանգներից երաշխավորված պաշտպանվածությունը:

110. Տնտեսական անվտանգության համակարգը երկրի տնտեսական այնպիսի համակարգ է, որի գոյության պայմաններում տնտեսական անվտանգության

սպառնալիքների առաջացման հավանականությունը և ազդեցության չափը հասցվում է նվազագույնի՝ հասարակություն-պետություն-բնություն ներդաշնակ փոխհարաբերությունների հաստատման, կայուն տնտեսական զարգացմանն ուղղված արդյունավետ մեխանիզմների կիրառման հենքի վրա:

111. Հայաստանի տնտեսական համակարգին ուղղված հնարավոր և առկա սպառնալիքներն անմիջականորեն կապված են աշխարհաքաղաքական դիրքի, հաղորդակցության միջոցների առանձնահատկության և ռազմավարական նշանակության ռեսուրսներով ապահովվածության ցածր աստիճանի, ինչպես նաև շրջակա միջավայրի վիճակի, ժողովրդագրական կառուցվածքի փոփոխությունների միտումների, բնակչության եկամուտների բևեռացվածության աստիճանի, աղքատության մակարդակի, տարաբնակեցման հետ: Ընդ որում, լինելով դեպի ծով ուղղակի ելք չունեցող երկիր, Հայաստանը մեծ կախվածության մեջ է իր հարևաններից, որոնց հետ լիարժեք հարաբերությունների բացակայությունը առաջացնում է լրացուցիչ խոչընդոտներ: Կախվածության գործոն է նաև Հայաստանի տնտեսության մեջ որևէ երկրի գերիշխող մասնակցությունը, ինչը կառավարման լծակների կենտրոնացվածության աստիճանի բարձրացման վտանգ է պարունակում:

112. Արտաքին և ներքին գործոնների այս շրջանակը Հայաստանի կայուն տնտեսական զարգացման քաղաքականությունը ճշգրտում է նաև տնտեսական անվտանգության ապահովման տեսանկյունից՝ ենթադրելով համակարգված քաղաքականության իրականացում՝

***ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ՝*** ռազմավարական գերակայությունների շարքին դասելով հանրապետությունն այլընտրանքային ճանապարհներով, կապուղիներով և տրանսպորտային միջոցներով ապահովելու, դրանց անխափան աշխատանքի նպատակով տարածաշրջանային համագործակցությունն ակտիվացնելու, ինչպես նաև դրանց նկատմամբ իրավունքների (պարտավորությունների) հակակշռման և բազմազանեցման ապահովման խնդիրները,

***ինովացիոն զարգացման ուղղությամբ՝*** ազգային ինովացիոն համակարգի կայացման և տնտեսության մեջ ինովացիոն գործընթացների աշխուժացման, գիտության և տնտեսության իրական հատվածի միջև կապերի սերտացման, տեխնոլոգիական վերազինման գործընթացի խթանման, գիտական, տեխնոլոգիական և արտադրական ներուժի զարգացման, գիտատար և էներգախնայող արտադրության ընդլայնման ճանապարհով,

*տնտեսական ակտիվության շարունակական ապահովման ուղղությամբ՝* ազատական տնտեսական քաղաքականության շրջանակներում մրցակցային միջավայրի բարելավման, ներդրումային գրավչության բարձրացման, օտարերկրյա ներդրումային հոսքերի և ողջ տնտեսության շարունակական դիվերսիֆիկացման, տնտեսությունում նոր հատվածների ձևավորման միջոցով,

*արտաքին առևտրատնտեսական համագործակցության ուղղությամբ՝* ներմուծման նկատմամբ ապահովելով արտահանման առաջանցիկ ան, խթանելով արտահանման կառուցվածքում գիտատար ապրանքների և ծառայությունների առկայությունը, նվազագույնի հասցնելով կրիտիկական ներմուծումը,

*տարածքներում տնտեսական ակտիվության բարձրացման ուղղությամբ՝* կենսական, սոցիալական, մշակութային պահանջմունքների պատշաճ բավարարման համար ապահովելով ինքնուրույն տնտեսական հիմքեր և աղբյուրներ:

113. Տնտեսական անվտանգության ապահովման գործընթացի վերահսկելիության համար համապատասխան ցուցանիշների պարբերական մոնիտորինգն անհրաժեշտ նախապայման է: Պետք է ձևավորվի ՀՀ տնտեսական անվտանգության կադապարը, որի կիրառմամբ հնարավորություն կընձեռնվի նկարագրել տնտեսության իրավիճակը մակրոտնտեսական մակարդակում, կատարել վերլուծություն և կանխատեսում և, որպես արդյունք, որոշել տնտեսական անվտանգության ռազմավարական գերակայությունները:
114. Տնտեսական անվտանգության պահանջներին համապատասխանող տնտեսության վիճակը պետք է բնութագրվի սոցիալ-տնտեսական կայունություն ապահովող որոշակի որակական և քանակական չափորոշիչներով: Տնտեսական անվտանգության վիճակի վերահսկելիության համար այս ցուցանիշների սահմանային արժեքները և դրանցից շեղումները, դրանց դիմամիկան ու միտումներն այն ազդակներն ու սահազանգներն են, որոնց համաձայն պետք է ճշգրտվեն համապատասխան քաղաքականությունները՝ հարկ եղած դեպքում նաև արմատական փոփոխությունների միջոցով:
115. Հայաստանի կայուն տնտեսական զարգացումը ազգային անվտանգության կարևորագույն երաշխիքներից մեկն է: Այդ խնդրի հստակ գիտակցման հիման վրա կառուցված տնտեսական քաղաքականության անշեղ և հետևողական իրագործման պարագայում Հայաստանը կարող է համաշխարհային զարգացումներին համահունչ տնտեսություն ունենալ, ինչն արդեն գործնական հենք է ազգային անվտանգության ապահովման և ազգային շահերի պաշտպանության համար:

\* \* \* \*

Գլոբալ համաշխարհային զարգացումները, առաջադրելով նոր և անխուսափելի մարտահրավերներ, ներկայանում են առավել սուր մրցակցությամբ և մրցունակության ամուր հիմքեր ապահովելու հրամայականով՝ որոշիչ դերակատարություն ստանձնելով զարգացման և հետագա առաջընթացի տեսանկյունից: Միաժամանակ, դինամիկ փոփոխվող պայմանները առաջընթացի նոր հնարավորություններ են բացում՝ հիմնված ինտիտուցիոնալ զարգացման, գիտելիքահենք տնտեսության ձևավորման, տարածքային համաչափ զարգացման և տնտեսական անվտանգության ապահովման ռազմավարական գերակայությունների վրա՝ ուղղված տնտեսության մրցունակության և կայուն տնտեսական զարգացման ապահովմանը: